2024, ՕԳՈՍՏՈՍ Ա, ԹԻՎ 15 (659)

Էջմիածնի Հայրապետական

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Օգոստոսի 9-ին **Մայր Աթոռում վերապատրաստման դասընթացներին մասնակից եկեղեցականներին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց երեքշաբաթյա վերապատրաստման դասընթացներին մասնակից քահանաներին, որոնք ժամանել էին Հայաստանի և Սփյուռքի տարբեր թեմերից:

Հանդիպմանը Նորին Սրբությունն իր հայրական օրհնությունը բերեց եկեղեցականներին՝ գոհունակությամբ արձանագրելով, որ դասընթացները հնարավորություն են ընձեռում քահանա հայրերին համախմբվելու Մայր Աթոռում, զորանալու Սուրբ Էջմիածնի առաքելության տեսիլքով, մեր սուրբ հայրերի ավանդած ժառանգությամբ, որոնք կերտել են հայ ժողովրդի փառքը, ինքնությունն ու դիմագիծը և ուղենշել ազգի հավիտենության ճանապարհը:

Իր խոսքում Հայոց Հովվապետը հորդորեց քահանա հայրերին նաև զորացնել փոխգործակցությունը համայնքների միջև՝ իրենց հոգեխնամ առաքելությունն էլ ավելի արդյունավետ դարձնելու համար:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատգամեց հոգևորականներին առավել նախանձախնդրորեն, անձնվիրաբար իրականացնել իրենց հովվական ծառայությունը՝ ազգի համար այս բարդ ժամանակահատվածում այն կարևոր պայման նկատելով Եկեղեցու և հայրենիքի զորացման:

Օգոստոսի 12-ին **ՀԲԸՄ-ի «Բացահայտիր Հայաստանը» ծրագրի մասնակիցներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) «Բացահայտիր Հայաստանը» ծրագրին մասնակից երիտասարդ հայորդիներին՝ ուղեկցությամբ հայաստանյան ՀԲԸՄ-ի նախագահ, ՀԲԸՄ-ի կենտրոնական վարչության անդամ տիար Վազգեն Յակուբյանի:

Հանդիպմանը տիար Յակուբյանը, հայցելով Նորին Սրբության օրհնությունը, ընդգծեց, որ ՀԲԸՄ-ի «Բացահայտիր Հայաստանը» ծրագրի նպատակն է ուխտագնացությունների, ճանաչողական և մշակութային ծրագրերի միջոցով զորացնել աշխարհասփյուռ հայ երիտասարդների կապը հայրենիքի հետ, ծանոթացնել նրանց հայ մշակույթին և հոգևոր ժառանգությանը: Տիար Յակուբյանը տեղեկացրեց նաև, որ ծրագրի շրջանակներում երիտասարդ հայորդիները Հայաստանում մասնակցում են կամավոր մարդասիրական ու համայնքային տարբեր ծրագրերի, այսօր էլ նախատեսում են կամավորական աշխատանքներ իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:

Իր օրհնությունն ու հայրական պատգամը բերելով ներկաներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձր գնահատեց Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից իրականացվող նմանօրինակ ծրագրերը, որոնց շնորհիվ սփյուռքի հայ երիտասարդներին հնարավորություն է ընձեռվում ճանաչելու հայրենիքը, զորացնելու ազգային ոգին ու գիտակցությունը:

Հայոց Հայրապետը համոզմունք հայտնեց, որ երիտասարդները, հաղորդ դառնալով հայրենի իրականությանը և հայրենիքով առավել ներշնչված, իրենց կարողություններն ի սպաս կդնեն հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերների հաղթահարմանը և լուսավոր ապագայի կերտմանը:

Վերջում Վեհափառ Հայրապետը հայորդիներին պատգամեց նաև հավատարիմ մնալ նախնյաց արժեքներին, նախանձախնդրություն դրսևորել ազգային ինքնության պահպանման գործում և ակտիվորեն ներգրավվել ազգային-եկեղեցական կյանքին:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Ուրախությամբ աստվածահաճո և ազգօգուտ գործունեությամբ

«Էջմիածին» ամսագրի 80-ամյակի առթիվ

1919 թ. իր արդյունավոր ու մեծարժեք գոյությունն է դադարեցնում Գևորգ Դ Մեծագործ Վեհափառի հիմնադրած «Արարատ» ամսագիրը, և տասնամյակներ շարունակ Մայր Աթոռը մնում է առանց լրատու ու գիտելիքաբաշխ ազդարարի: 1944-ին՝ աշխարհակործան պատերազմի դժնի օրերին, Գևորգ Զ Հայրապետի նկարագրի, խոհեմության ու դիվանագիտության շնորհիվ եկեղեցամերժ ու անաստված անծայրածիր կարմիր կայսրության՝ հայության հոգևոր կենտրոնատեղիում ծնունդ է առնում ազգիս գլխավորագույն սրբավայրի անվամբ մկրտված պարբերականը՝ «Էջմիածին» կրոնագիտական և հայագիտական ամսագիրը: Ամենայն Հայոց Կաթողիկոսության Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական ամսագիրն իր ուսերին է առնում փառապանծ «Արարատ»-ի թիկնոցը և ահա մի քանի տասնամյակ պատվով կրում է այն:

Առաջին խմբագիր է նշանակվում Առաքել Առաքելյանը, իսկ անդրանիկ համարի գեղարվեստական ձևավորումը կատարում է նշանավոր արվեստագետ, գեղանկարիչ Հակոբ Կոջոյանը, հաջորդ համարների ձևավորումը վստահվում է մանրանկարիչ, բեմանկարիչ Տարագրոս Տեր-Վարդանյանին, ճարտարապետ Բաղդիկ Արզումանյանին, անվանի գեղանկարիչ Գրիգոր Խանջյանին:

Մուրճի ու մանգաղի իշխանության պայմաններում, սակայն, Հայ Եկեղեցու նորահիմն պարբերականին, որի համարները պիտի ծանրաբեռն լինեին Եկեղեցուն վերաբերող գրե արգասիքներով, փաստորեն չի թույլատրվում իրականություն դարձնել իր առաքելությունը. Լուսավորչի գահին ու հավատավոր հայ ժողովրդին ծառայելու կոչված ամսագիրն սկզբնական շրջանում կրոնին, եկեղեցուն վերաբերող նյութեր գրեթե չի հրատարակում. խմբագրությունն իր աշխատանքն ստիպված էր կատարել՝ ժամանակի պետական-քաղաքական տրամադրությունները հաշվի առնելով, և միայն 1950-ական թթ. հնարավորություն է ստեղծվում նրա առաքելությունն իրականացնելու:

1956 թ. խմբագրական աշխատանքները պատշաճ կատարելու համար Վազգեն Ա Կաթողիկոսի տնօրինությամբ ամսագրի խմբագրությանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հատկացվում է առանձին գրասենյակ: Խմբագրությունը նաև ստանձնում է Մայր Աթոռի հրատարակչի պարտականությունները՝ հրապարակ բերելով տասնյակների հասնող բազմատեսակ աշխատություններ: Վազգեն Վեհափառի անմիջական նախաձեռնությամբ և Մայր Աթոռի բարերար Երվանդ Աղաջանյանի հանգանակությամբ Մայր Աթոռի տպարանը հանդերձավորվում է համապատասխան սարքավորումներով: Պարբերականի տպագրությունն անխափան իրականացնելու նպատակով 1961 թ. հոկտեմբերի 15-ին վերաբացվում է Մայր Աթոռի տպարանը. մինչ այդ «Էջմիածին»-ը տպագրվում էր Երևանում:

Մայրեկեղեցական պարբերականի խմբագրին օժանդակելու, պարբերականի գիտականությունը նոր մակարդակի բարձրացնելու և հրատարակությունն առավել արդյունավորելու նպատակով 1965 թ. Վազգեն Հայրապետի նախաձեռնությամբ ստեղծվում է խմբագրական խորհուրդ:

➥ էջ 2

Ութսունամյա աստվածահաճո և ազգօգուտ գործունեությամբ

➥ էջ 5

2018 թվականից սկսած, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ, «Էջմիածին» ամսագրի խմբագրության աշխատանքները համակարգում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինը (տնօրեն՝ Տեր Արարատ քհն. Պողոսյան): Պարբերականի տպագիր օրինակներն առաքվում են Հայաստանի և արտերկրի մի շարք գրադարաններ, թվային տարբերակները՝ տեղադրվում համացանցային հատուկ կայքերում, առցանց շտեմարաններում:

Հայոց հոգևոր մայրաքաղաքում ամսեամիս ի լույս բերվող 80-ամյա գրային ամփոփարանը հիմնականում ի պահ է վերցնում հայ եկեղեցական կյանքի հիշարժան դրվագներ, աստվածաբանական և հայագիտական հոդվածներ: Պարբերականի էջերը մեզ ներկայացնում են՝ հայրապետական կոնդակներ, քարոզներ, ճառեր, ելույթներ, նամակներ, ողջունագրեր, հեռագրեր, մահագրականներ, վճիռներ, լուսաբանումներ՝ Վեհափառի արտասահմանյան ուղևորությունների, ինչպես և միջեկեղեցական զարգացումների, Էջմիածին–Անթիլիաս հարաբերությունների, Հայ Եկեղեցու բարեկարգության, եկեղեցիների կառուցման, վերակառուցման ու վերաբացման, քրիստոնեական դաստիարակության կենտրոնների հիմնման, ձեռնադրությունների, սփյուռքյան իրադարձությունների, Գևորգյան հոգևոր ճեմարանի, Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի և Կալկաթայի Մարդասիրաց ճեմարանի կյանքի, Հայոց ցեղասպանությանը նվիրված ժողովների մասին, նաև ցեղասպանությանը վերաբերող հայ անվանի գրողների երկեր, չափածո գրականություն և այլն:

Հայ եկեղեցական կյանքի հիշալի լուսաբանումները, որ տվյալ ժամանակահատվածում ունեն իրազեկային նշանակություն, հետագայում ձեռք են բերում սկզբնաղբյուրային արժեք, ասել կուզի՝ «Էջմիածին»-ը նաև աղբյուրագիտական դերով է արժեքավոր. իբրև Հայ Եկեղեցու, նաև հայոց պատմության մասին տեղեկություններ պարունակող գրային պաշար՝ այն գանձ է ուսումնասիրողների համար, ինչպես իր փառահեղ նախորդը՝ «Արարատ»-ը կամ մեր միջնադարյան գրավոր հիշատակարանները: Հայ Եկեղեցու վերջին 80 տարվա կյանքը «Էջմիածին» պարբերականի շնորհիվ այլևս հանգամանորեն գրառված-փաստագրված-անմահացած է, գրո հիշատակմամբ ի պահ է տրված մտքի հերկ անող սերունդներին, և շարունակվում է այս գրառում-փաստագրում-անմահացումը: Եվ եթե հետագա տարիներին ու դարերին Հայ Եկեղեցու անցյալը քննող մտքի որևէ մշակ գրիչը ձեռքն առնի և կամենա պեղել Եկեղեցու՝ 1944-ից սկիզբ առած պատմաշրջանը, ապա հայացքն առաջին հերթին պիտի ուղղի «Էջմիածին» պարբերականին՝ իբրև իր օրեր հասած արժեքաբանական անգին ժառանգության, սրբաթաթախ գիտելիքակիր նշխարանոցի:

Հոբելյար պարբերականը չի ամփոփվել Եկեղեցու պատերի մեջ, անդրադարձներ է արել, մասնակիցը եղել հայության համար նշանակալի իրադարձությունների՝ ներգաղթ, Արցախյան պայքար ու ողբերգություն և այլն: Խորհրդային դարաշրջանում, երբ ազգայինը, մեղմ ասած, չէր խրախուսվում, «Էջմիածին»-ը լիաբեռն համարներ էր լույս ընծայում Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Իր գոյության 80 տարիներին այն ասպարեզ է բերել համազգային նշանակություն ունեցող եկեղեցական ու պետական տոներին և հիշատակի օրերին նվիրված բազմաթիվ բացառիկ համարներ, անդրադարձել հոբելյանների:

Ամսագիրը հայագիտության անդաստանի բերքահավաքներից ու բերքաբաշխներից է. լույսընծայման առաջին իսկ օրվանից մինչ օրս իրենց մտավոր որոնումների ծնունդը նաև «Էջմիածին»-ի պարբերական լուսաբերումներով են հայագիտական համայնքին ի ցույց դնում և դեպի անմահություն ճանապարհում հայագիտության ու Հայ Եկեղեցու տարասերունդ մեծաթիվ ներկայացուցիչներ հայրենիքից ու սփյուռքից, այդ թվում՝ մի ողջ աստղաբույլ՝ Հրաչյա Աճառյան, Ստեփան Մալխասյանց, Արշակ Ալպոյաճյան, Երվանդ Շահազիզ, Գարեգին Լևոնյան, Լևոն Մելիք-սեթ-Բեկ, Կարո Ղաֆադարյան, Երվանդ Տեր-Մինասյան, Գևորգ Ջ Չորեքչյան Կաթողիկոս, Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Ա Հովսեփյանց Կաթողիկոս, Վազգեն եպիսկոպոս Պալճյան (Ամենայն Հայոց Վազգեն Ա Կաթողիկոս) և այլք:

«Էջմիածին»-ը ընթերցողներին ու հետազոտողներին հրամցնում է արխիվային նյութեր, հուշեր, նամակներ: Պարբերականի էջերում տեղ է տրվում Մայր Աթոռ Սուրբ



Էջմիածնի նորաստաց ձեռագրերի գիտական ցուցակին, ինչպես և այլ ձեռագրերի համառոտ նկարագրությունների: Ամսագրի միջոցով հայագետների սեփականությունն են դառնում մեր միջնադարյան մատենագիրների մի շարք անտիպ գործեր: Հայ միջնադարյան հուշարձանների արձանագրությունների հրատարակումը ևս առանցքային տեղում է լինում: Թարգմանաբար ներկայացվում են նաև հայ մատենագրության հետ սերտորեն կապված այլալեզու աշխատանքներ: «Էջմիածին» պարբերականն ընթերցողին բաժին է հանում նախնյաց բարձրարժեք մտավոր պաշարի նշխարներից՝ բազմաթիվ արտատպություններ «Արարատ», «Հասկ», «Շողակաթ», «Սիոն», «Հայաստանյայց եկեղեցի» հանդեսներից, անվանի հոգևոր այրերի քարոզների վերահրատարակություններ: Ամսագրի էջերը բովանդակում են նաև հայ և այլազգի հայագետների կյանքին ու գիտական ժառանգությանը վերաբերող հոդվածներ, նրանց հայագիտական գործերի մատենագիտությունները:

«Էջմիածին»-ը չի մոռանում իր փառապանծ նախորդին՝«Արարատ»-ին. 1968 թ. լույս է ընծայում նրա հարյուրամյակին նվիրված բացառիկ, պերճաբովանդակ համարը, իսկ 1968–1970 և 1973–1974 թթ.՝ «Արարատ» ամսագրի 50 տարվա և «Էջմիածին» ամսագրի 30 տարվա նյութերի մանրակրկիտ մատենագիտությունները: Եվ իբրև այս ամենի տրամաբանական շարունակություն ու վերջնակետ՝ լույս աշխարհ է բերում իր և իր նախորդի մատենագիտությունները՝ «Մատենագիտություն «Արարատ» ամսագրի»՝ հայ պարբերական մամուլի պատմության մեջ առաջին լիակատար և օրինակելի մատենագիտությունը (կազմող՝ Սեդա Կոծինյան, խմբագիրներ՝ Սուրեն Քոլանջյան, Արթուն Հատիտյան, Էջմիածին, 1970), «Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի» (կազմող՝ Սեդա Կոծինյան, խմբագիրներ՝ Արթուն Հատիտյան, Սուրեն Քոլանջյան, Սուրբ Էջմիածին, 1975), «Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի (1974–2008 թթ.)» (կազմող՝ Տեր Արարատ քահանա Պողոսյան, խմբագիր՝ Գևորգ Տեր-Վարդանյան, Սուրբ Էջմիածին, 2012). մշտավառ փարոսներ հայագիտության տարբեր հորիզոններում որոնումների ելած գանձախույզների համար: Ամսագրում տեղ գտած մի շարք հոդվածաշարեր հրատարակվում են իբրև առանձնատիպ:

1956 թվականից ի վեր «Էջմիածին» ամսագրի խմբագրությունն է պատրաստել և հանրության սեփականությունը դարձրել կրոնական, եկեղեցագիտական, ճանապարհորդագրական, պատմաբանասիրական բնույթի մի քանի տասնյակ անուն գիրք: Հայաստանի անկախացումից հետո ամսագրի պատմաբանասիրական բնույթն ավելի է ընդգծվում:

Այս ամենի մեջ մեծ ու նշանակալից է եղել և այսօր էլ կա խմբագիրների դերը, որ տասնամյակներ շարունակ կազմակերպել և ուղենշել են մայրեկեղեցական պարբերականի ընթացքը, հաղթահարել նրա առջև ծառացած խոչընդոտները, պաշտպանել նրա տեսակը: Խմբագիրներից յուրաքանչյուրն իր անձնանձիր աշխատանքն է դրել ամեն մի համարի կայացման հիմքում, իր աղյուսն ավելացրել «Էջմիածին» անունը կրող 80-ամյա փառահեղ ու լուսաբեր շտեմարանի հիմնապատին. հիշատակենք նրանց անուն առ անուն՝ Առաքել Առաքելյան, Լևոն Կիսաբեկյան, Աշոտ Աբրահամյան, Արթուն Հատիտյան, Պարգև Շահբազյան, Երվանդ Մելքոնյան, Տեր Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյան, Տեր Բագրատ աբեղա Գալստանյան, Մարիամ Վարդանյան, Տեր Արշակ աբեղա Խաչատրյան, Անդրանիկ Ջեյթունյան, Վարդան Դևրիկյան, Արշակ Մադոյան, Արսեն Բոբոխյան, Հայր Անդրեաս աբեղա Եզեկյան, Գևորգ Մադոյան:

«Էջմիածին» ամսագիրը երևույթ էր և է Հայ Եկեղեցու ու հայ մամուլի պատմության մեջ: Հայոց Հայրապետների՝ առ հավատացյալ հոտն ուղղված խոսքի, Հայ Եկեղեցու կյանքի, հայ ժողովրդի քրիստոնեական հավատքն ամուր պահելու և հայ գիտության ծառաների ժողված հունդի բաշխման ու հավերժին ի պահ տրման հիմնական միջոցներից է Էջմիածնահիմն այս պարբերականը, Հայ Եկեղեցու ու հայ ժողովրդի ուրախ և տխուր օրերի, անկումների ու խոյանքների, կորուստների ու ձեռքբերումների ականատեսն ու վկան, նաև լույսի հաղթակին ու խավարի հալածմանը նպաստողներից: Այո՛, դար ու դարեր առաջ Սուրբ Մեսրոպի ու Սուրբ Սահակի օրհնաբեր աջով Հայոց աշխարհում սփռված լույսն այսօր նաև «Էջմիածին»-ի միջոցով է շարունակում իր առաքելությունը:

Այսպիսով՝ տասնամյակներ շարունակ «Էջմիածին»-ը ամենամյա պարբերականությամբ հավաքում է Էջմիածնական կյանքի նորություններն ու հայագիտության անդաստանի պտուղները և բաշխում հոգու հացով ապրող, մտքի նվաճումներով ու հարստացումով ուրախացող հանրությանը, իր բաժին մեծ ջանքն ի գործ դնում ճակատագրի անողոք հարվածով երկատված, աշխարհով մեկ սփռված հայության միասնությունն ամրապինդ պահելու առաքելության մեջ:

Այսպիսին է «Էջմիածին» ամսագիրը՝ հայ եկեղեցական ու հայագիտական կյանքի կարևորագույն իրադարձությունների, ձեռքբերումների վկան, արձանագրողն ու ազդարարողը: Իր մեծ նախորդի՝ «Արարատ»-ի նման նա էլ դարձավ առաքելահաստատ Հայ Եկեղեցու տարեգիրը, հայելի, որ արտացոլում է հայ հոգևոր-մշակութային կյանքի վերջին ութ տասնամյակի պատկերը:

Մաղթենք ու ջանանք, որ իր արդյունավոր ընթացքի հարյուրամյակը «Էջմիածին»-ը դիմավորի առատ արարումներով ծանրաբեռն, արժեքաստեղծ նոր հարյուրամյակներ նվաճելու վճռականությամբ առլի: Թող հայ եկեղեցական ու գիտական մամուլի՝ «Էջմիածին»-ին հատկացված գրադարակն անընդմեջ համալրվի Էջմիածնական մայր պարբերականի լուսապարգև համարներով: Թող հարյուր, երկու հարյուր, երեք հարյուր և բազում այլ հարյուրամյակներ անց էլ «Էջմիածին»-ը մեր առջև հառնի իբրև Հայ Եկեղեցու ու հայ գիտության բարի ավետաբեր: Ամեն:

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ (Արմենյան),
բ. գ. թ.

ՔՐԻՍՏՈՆՅԱ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Սուրբ Անդրե զորավարի և նրա բանակի, Կալինիկոս և Դոմետիոս վկաների հիշատակությունը

«Բայց այս բոլորից առաջ ձեզ պիտի ձերբակալեն և հալածեն, ատյանների ու բանտերի պիտի մատնեն ձեզ և կուսակալների ու թագավորների առաջ պիտի տանեն ձեզ իմ անվան համար: Եվ այդ ձեզ համար պիտի լինի առիթ վկայության»

(Ղուկ. 21:12–13):

Այս խոսքերով Աստծո Որդին կանխատեսեց խաչի ճանապարհով ընթացողներին՝ Իր խոսքին հավատացողներին և դրա քարոզիչներին սպասող փորձությունները: Տեր Հիսուս Քրիստոս Իր գալուստով այս երկրի վրա երբևէ խաղաղ և անհոգ կյանք չխոստացավ մեզ, այլ՝ հալածանք, պայքար, անձնազոհություն Իր անվան համար: Թե՛ առաքյալները և առաջին քրիստոնյաները, թե՛ երկուհազարամյա պատմություն ունեցող քրիստոնեական Եկեղեցին մշտապես Քրիստոսի խաչի թշնամիների կողմից հետապնդումների և բռնությունների են ենթարկվել: Նրանք իրենց կյանքով և թափած արյունով են խոստովանել առ Աստված ունեցած անաղարտ և սուրբ հավատը՝ առանց երկնչանքի և տարակուսանքի: Նահատակների մասին գրվել են վարքեր և վկայաբանություններ, որոնք դարերի ընթացքում դարձել են քրիստոնյաների համար կյանքի ապրման կատարելատիպ և լավագույն օրինակ: Այսօր էլ քրիստոնեական Եկեղեցին շարունակում է տոնախմբել կամ հիշատակել հանուն Քրիստոսի հավատի անձնուրաց գործած սրբերի և նահատակվածների անունները՝ փորձելով քրիստոնյա հավատացյալին փոխանցել այն առանձնահատուկ առաքինությունները, որ դրսևորվել են նրանց կողմից: Նմանատիպ հիշատակություններից է Ս. Անդրե զորավարի և նրա բանակի, Կալինիկոս և Դոմետիոս վկաների օրը:

Դեռևս հեթանոս Հռոմեական կայսրությունում քրիստոնեության տարածումից ի վեր մեծ չափերի էին հասնում քրիստոնյաների հանդեպ հալածանքները՝ Ներոն կայսրից (54–68 թթ.) մինչև Դիոկղետիանոս (284–305 թթ.) և Հուլիանոս Ուրացող (361–363 թթ.): Այդ հալածանքները սաստկացան հատկապես Դիոկղետիանոս և Մաքսիմիանոս կայսրերի օրոք, որոնք ջանում էին մարել հավատքի լույսը և վերացնել քրիստոնեական պաշտամունքը՝ մահվան սպառնալիքով ստիպելով բոլոր հավատացյալներին երկրպագել հեթանոս կուռքերին: Չնայած նրանց չարակամ մտադրությանը՝ Եկեղեցին էլ ավելի էր հզորանում, ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Դրա համար էլ գոհ եմ ի սեր Քրիստոսի կրած իմ տկարությունների, նախատինքների, վշտերի, հալածանքների և նեղությունների համար, որովհետև երբ տկար եմ, այն ժամանակ եմ զորավոր» (Բ Կորնթ. 12:10):

Դիոկղետիանոս և Մաքսիմիանոս անօրեն կայսրերի օրոք է ապրել Ս. Անդրեաս զորավարը, որը ծագումով Կիլիկիայից էր և որպես կայսերական բանակի հրամանատար՝ ծառայում էր Ասորիքում: Նա հայտնի էր քաջարի և տաղանդավոր զինվորականին բնորոշ հմտություններով և շնորհներով: ➥ էջ 3, 5

Սուրբ Անդրե զորավարի և նրա բանակի, Կալինիկոս և Դոմետիոս վկաների հիշատակությունը

➥ էջ 2

Պարսկական բանակի հերթական ներխուժման ժամանակ Ասորիքի կառավարիչ Անտիոքոսը նրան և նրա հինգ հարյուր ինն-սունինը քաջերին է վստահում թշնամական բազմահազարանոց զորքերին կանգնեցնելու հանձնառությունը. «Քո արիության ու քաջության համբավը ամեն կողմում տարածված է, քանի որ բոլոր պատերազմների հաղթական ավարտը քեզնից իմացան բոլոր մարդիկ, որի համար և այդպիսի պատվի արժանացար և հիմա առավել կցուցադրես այս պատերազմում քո հաղթական քաջությունը, որ ավելի պատվի, գովեստի ու մեծարման արժանանաս» (Վարք Սրբոց, հատոր Ա, էջմիածին, 2009, էջ 111):

Ս. Անդրեն, Աստծո օգնականությունը հուսալով, ընդունում է իշխանի հրամանը և իր հետ վերցնելով իրենց քաջությամբ հայտնի մարդկանց՝ ընդառաջ գնում թշնամուն: Փոքրաթիվ զորքը, հակառակորդի բազմությունը տեսնելով, վախի և խուճապի մեջ է ընկնում: Սակայն արիասիրտ և աստվածապաշտ զորավարը, լցված Սուրբ Հոգով, քաջալերվում է և այսպիսի կոչով դիմում իր զինվորներին. «Եղբայրներ, եկել է առ Աստված դառնալու, կուռքերի մոլորությունից հրաժարվելու և երկնքի ու երկրի Աստծուն հավատալու ժամանակը, Որի

Ս. Անդրե զորավարը

ձեռքին են բոլոր հաղթանակները: Ժամանակն է Բարձրյալից հայցել վերին օգնականություն և փրկություն, որովհետև Նա կենդանի ու կենդանարար Աստված է, ամենքի Արարիչը և անհաղթելի Թագավորը: Նա օգնական է բոլոր նրանց, ովքեր դիմում են Իրեն, և Նա է, որ փրկում է բոլոր նեղություններից: Արդ, այսուհետև հավատացե՛ք ամենասուրբ Երրորդությանը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, և այդ հավատքով մտեք պատերազմի մէջ» (Վարք Սրբոց, էջ 111):

Լսելով զորավարի գոտեպնդող խոսքերը՝ բոլորն իրենցից վանեցին երկյուղն ու տագնապը, նրանց մտքերը լուսավորվեցին, և խոստովանեցին հավատը Սուրբ Երրորդության հանդեպ: Ինչպես Հեսու Նավեն, Անդրե զորավարն ու նրա զինվորներն ապավինեցին Աստծո զորությանը և հալածեցին ու փախուստի մատնեցին թշնամու բյուրավոր զորքին: Փառավոր հաղթանակը կերտված էր: Սակայն կռապաշտ Անտիոքոս կուսակալը իմանալով, որ զորքը գովերգում է Աստծուն և Նրան վերագրում հաղթանակի փառքը, սաստիկ զայրանում է և լցվում չար խորհուրդներով:

Երբ սուրբն ու իր զորականները գալիս են քաղաք, մեծ ոգևորությամբ պատմում էին, թե ինչ հրաշքով հաղթանակ տարան, սակայն ապերախտ Անտիոքոսը կարծրացրեց իր սիրտը և չցանկանալով լսել նրանց՝ սկսեց հնար փնտրել Տիրոջը խոստովանողներին ճշմարիտ հավատից հեռացնելու համար: Անկարող լինելով տարհամոզել՝ կուսակալը որոշեց նրանց աքսորել և երկու հազար զինվորների ուղեկցությամբ դուրս բերեց քաղաքից, իսկ Աստծո սուրբ բանակը հնազանդությամբ հանձն առավ այդ չարչարանքները: Ճանապարհին զորավարը շարունակում էր քարոզել Աստծո խոսքը և կոչ անել անհողդողդ մնալ հավատի մեջ: Տեսնելով ու լսելով նրանց՝ կուսակալի երկու հազար զինվորները զղջացին իրենց սրտերում և ճանաչեցին Կենդանի Աստծուն: Բոլորը, փառք տալով Աստծուն, ճանապարհի ընկան դեպի Կիլիկիա՝ չկամենալով այլևս վերադառնալ Անտիոքոսի մոտ:

Այս ավետիսը գույժ եղավ կուսակալի համար, որը հաստատ մնալով իր որոշումներում և գործերում՝ նամակ հղեց Կիլիկիայի կառավարիչ Սելևկիոսին և պատվիրեց նրան ոչնչացնել զորավարին և նրա սուրբ բանակը: Իսկ վերջինս գազանային հրճվանքով հանձն առավ այդ անաստված գործը: Այդ ընթացքում երանելի Անդրե զորավարն իր զորքի մեծ բազմությամբ գնաց Կիլիկիայի Տարսոն քաղաք, որտեղ հանդիպեցին քաղաքի Պետրոս և Բերիա քաղաքի Նունոս եպիսկոպոսներին ու մկրտվեցին նրանց ձեռամբ Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով: Երբ Սելևկիոսն այս բանը լսեց, չարությունից այլագունվեց և թունավոր իժի պես մեծաթիվ գնդով սկսեց հալածել Աստծո սուրբ բանակը՝ ցանկանալով բոլորին անխնա կոտորել: Բայց սրբերը, ճշմարտության հաստատակամությունն ունենալով, հզոր բազկով հարվածում էին թշնամուն այնպես, որ վերջիններս չէին կարողանում ճակատ առ ճակատ կռվել նրանց դեմ:

Տեսնելով, որ մարտնչելով հնարավոր չէ հաղթել, Սելևկիոսը փակեց լեռնանցքը և դարանակալեց, իսկ Ս. Անդրեն բանակեց ձորամիջում: Քաջակորով զորավարը հասկանալով, որ վճռորոշ պահը մոտեցել է, եկել է նահատակության սուրբ վայրկյանը, դիմում է իր զորքին այս խոսքերով. «Եղբայրներ, իմ սիրելի և քաջ նիզակակիցներ, ահա ժամը արիաբար քաջանալու և հաճո լինելու երկնավոր Թագավորին. ահա ժամը մարտի և հաղթության, որ անթառամ պսակի արժանանանք: Այսուհետ հաստատուն մնացեք մեր Տեր Հիսուս Քրիստոսի հավատին, պինդ բռնեցեք շնորհը, որ ձեզ տրվեց, հիշեցեք երանավետ պարգևները՝ ձեզ խոստացած Տեր Հիսուս Քրիստոսից: Ձեզնից ոչ մեկը մտքով չշեղվի ընկալյալ շնորհներից, ոչ մեկը հավիտենական կյանքից չզրկվի՝ ցանկանալով երկրային կյանք: Հասել ենք գավթի դուռը, ոչ մեկը հետ չդառնա և վրիպի հարսանյաց առագաստից: Բարվոք պատերազմը պատերազմեցինք և ահա պատրաստ ենք հատուցման վարձքին, և շուտով Թագավորը երկնային փառքով պսակելու է մեզ: Ցանկալի է մեռնել մեր Տեր Հիսուս Քրիստոսի անվան համար, որ նրա հետ կենդանանանք և փառավորվենք անճառ ու անապական բարիքով: Ցանկալի է այս սնոտի և ապականացու կյանքը փոխանակել անմահական կյանքով, ցանկալի է ուրանալ աշխարհական մեծությունները, որ հանդերձյալում շահենք բազմապատիկ արդյունք, մեկին՝ 30, մեկին՝ 60, մեկին՝ 100 ու առավել ևս»: ➥ էջ 5

ՆԱԽԷ... ԱՆՄԿԻՉԲ ՈՒ ԱՆՎԵՐՋ, ԱՆՔՆԻՆ ԵՎ ԱՆԸՍՏԳՅՈՒՏ....

Բարու և չարի գիտության ծառը

«Տերը՝ Աստված, պատվիրեց Ադամին՝ ասելով. «Դրախտում եղած ամեն մի ծառից կարող ես ուտել, բայց բարու և չարի գիտության ծառից մի՛ կերեք, որովհետև այն օրը, երբ ուտեք դրանից, անպայման կմեռնեք»

(Ծննդոց 2:16—17):

Աստծո կողմից մարդուն տրված առաջին պատվիրանն առնչվում է պտղատու ծառերի մեջ ընտրություն կատարելուն: Մարդկության պատմության հետագա ընթացքը ցույց է տալիս, որ տարրական կենցաղային հրահանգի խախտումը հանգեցնում է մեծագույն ու անդառնալի իրողությունների, որոնք պատճառ են դառնում ներդաշնակության խաթարման, երջանկության կորստյան, մարդկային հոգու ցավերի, ֆիզիկական աշխարհի տիրապետության, հոգևոր քաղցի անհագուրդության և աստվածային հայացքի մշտատանջ որոնումների:

Հրեական ընկալումներում դրախտում տնկված բարու և չարի գիտության ծառի որոշակիության վերաբերյալ միակարծությունը բացակայում է. ռաբբիների և հրեա կրոնագետների մոտեցումները խիստ տարբեր են և պայմանական: Հրեական ավանդություններում բարու և չարի գիտության ծառը նույնականացվում է ցորենի, շաղգամի, խաղողի որթի, կիտրոնի ծառի և թզենու հետ:

Քրիստոնեական եկեղեցական ավանդության մեջ բարու և չարի գիտության ծառը հիմնականում դիտարկվել է հոգևոր-խորհրդածական հայեցողության լույսի ներքո: Օրինակ՝ Սուրբ Գրիգոր Նազիանզացին «Զատկի մասին» ճառում գրում է, որ գիտության ծառը իմացության, մտորումների խորհրդանշական անվանումն է: Մաքսիմոս Խոստովանողն այն անվանում է «ճանաչողության ծառ», որը մարմնապես և զգայապես ճաշակելը հանգեցնում է անմտության, հոգևոր ճանապարհից խոտորման: Այդ ծառից ճաշակելուց հետո է, երբ բարի կամքի և աստվածային ուղղորդման կողքին տեղ է գտնում մարդկային մեղանչական կամքը՝ բարու և չարի ճանապարհների ընտրության հնարավորությամբ:

Հրեական մեկնություններում և քրիստոնեական վաղ ավանդազրույցներում բարու և չարի գիտության ծառը հաճախ է նույնականացվել խնձորենու հետ: Պատճառը լատիներենում առկա բառային նմանությունն է. *malum* նշանակում է խնձոր, իսկ *malus*՝ չար: Քրիստոնեական պարականոն (ապոկրիֆ) գրականության մեջ բարու և չարի գիտության ծառի վերաբերյալ գոյություն ունեն մի շարք թափառող պատմություններ, ավանդազրույցներ, ըստ որոնց՝ այդ ծառից մի ճյուղ հրեշտակապետը հանձնել է Սեթին՝ Ադամի որդուն, որն էլ այն տնկել է հոր մահացած վայրում, որտեղ աճած ծառից պատրաստված փայտի վրա էլ հետագայում խաչել են Քրիստոսին:

Եթե մենք ցանկանում ենք հասկանալ Կենաց ծառի և բարու ու չարի գիտության ծառի նշանակությունը դրախտային այգում, մենք պետք է դրանք քննենք արարչական կարգի շրջանակում: Ծառերը բույսերի և սերմերի հետ միասին կենդանանում են Աստծո խոսքով արարչագործության երրորդ օրը՝ որպես արարչագործության հաջորդականության շղթա (Ծնն. 1:11—12): Ջրերում և ցամաքում աճող մյուս բուսականության հետ մեկտեղ ստեղծված ծառերը սերմացու են և պտղաբեր: Աստված մարդկությանը տալիս է բույսերը և ծառերի պտուղները՝ որպես կերակուր. «Աստված նաև ասաց. «Ահա ձեզ իբրև կերակուր տվեցի սերմ տվող սերմանելի բույսերը՝ տարածված ողջ երկրի վրա, և իր պտուղի մեջ սերմանելի սերմ ունեցող բոլոր ծառերը»» (Ծնն. 1:29): Հետևաբար՝ յուրաքանչյուր պտղաբեր ծառ և սերմնատու բույս պետք է լինեին Ադամի ցեղի կերակուրը:

Եդեմի պարտեզի երկու ծառերը թեև եզակի են աշխարհի ծառերի ու բույսերի մեջ, այնուամենայնիվ, իրենց տեսակին համապատասխան՝ որպես պտղատու ծառեր, կերակրի միջոց են: Աստված ծառերը դնում է այգում և թույլ է տալիս, որ ճաշակեն Կենաց ծառի պտղից, բայց արգելում է ուտել բարու և չարի գիտության ծառից: Սա կամայական պարտադրանք և արգելք չէ, այլ արդեն իսկ լավ հռչակված բանի սահմանափակում, որը տրվել է մարդկությանը՝ մեր սպառման համար: Այստեղ Արարչի կողմից մարդուն ուղղված հրամանը բոլորովին տարբերվում է նախորդ գլխում կենդանիներին ուղղված օրհնություններից: Պարտադիր չէր, որ այս օրհնություններն ըմբռնվեին, որպեսզի կիրառվեին, քանի որ Նա, Ով դրանք արտասանեց, տվեց դրանց իրականացման համար անհրաժեշտ բնազդներն ու զորությունները: Ուրեմն, լեզուն հասկանալու կարողությունն ի սկզբանե դրված էր մարդու կառուցվածքում, և պահանջվում էր միայն այն արտասանել Աստծո հստակ ձայնով: Մարդն այժմ խոսքի տեսության վարպետ է. նշանի հասկացությունը փոխանցվել է նրա մտքին: Մարդու ֆիզիկական կազմավորումը հայտնվում է «ուտելու» գործընթացում: Նրա էության բարոյական մասը տեղ է գտնում «կարող է» և «չպետք է» բառերի նշանակության մեջ: Արարքների և իրերի մեջ արժեքների տարբերակումն արտահայտվում է «բարի» և «չար» բնորոշումներով: Պարգևատրման հասկացությունը փոխանցվում է «կյանք» և «մահ» եզրույթներով: Եվ, վերջապես, «Տեր Աստծո» ներկայությունն ու իշխանությունը ենթադրվում են հենց պատվիրանի բնույթով: Մարդը պետք է կրի Աստծո պատկերը ըմբռնողական ուժերով, ուշադիր հայացքով պետք է

Ադամը և Եվան, Թորոս Տարոնացի, 1318 թ., Գլաձոր

զննի իրականության բազմազան տեսարաններում ամենաբարձրը, ինչպես նաև ամենացածրը:

Եդեմի պարտեզում գտնվող Կենաց ծառը Աստծո աջակցող զորության պարգևն է: Նրանք, ովքեր ուտում են դրանից, ապրում են հավիտյան (Ծնն. 3:22): Ի սկզբանե մարդկությունն ավելին էր, քան կենսաբանական էություն, հողեղեն արարած լինելը: Ի սկզբանե մարդուն ավելին էր պետք, քան սնունդը՝ ապրելու համար, քանի որ մարդն Աստծո կարիքն ունի, և առանց Աստծո և Նրա սուրբ խոսքի պահպանության՝ անզոր է կյանքի իմաստի մեջ խորամուխ լինելու և բանաձևելու մարդկային կյանքի նպատակը: Այլ կերպ ասած՝ «մարդը միայն հացով չի ապրում, այլ այն ամեն խոսքով, որ ելնում է Աստծու բերանից» (Բ Օրին. 8:3): Երբ Ադամը և նրա ցեղակիցները ճաշակում էին աստվածատունկ այգու ծառերից, որոնք ուտելի էին, նրանք կենսաբանորեն նորոգվում էին, մարմնապես առույգանում (ֆիզիկական գոյավիճակ): Կենաց ծառից ուտելով՝ նրանք ստանում էին ներքին և հոգևոր նորոգություն, հավերժական կյանքով լիություն և Աստծո հետ հաղորդակցության, Նրա բարության մեջ հարատևելու զգացումներ (հոգևոր գոյավիճակ): Մեղանչելուց հետո Կենաց ծառը հանվում է մարդու ճաշացանկից՝ ի բարօրություն իրեն: Եթե Ադամը, Եվան կամ նրանց զավակներից որևէ մեկը, մեղանչած և փառքից ընկած լինելով (Հռոմ. 3:23), օգտվեին այդ ծառից, նրանք կունենային անվախճան կյանք, բայց աշխարհային այդ հավիտենությունը կլիներ դատապարտված և անիծված պայմաններում՝ հավերժ զրկված փրկագնումից: Պարզ ասած՝ նրանց օրերի տևողությունը միայն ընդլայնված թշվառություն կլիներ, նրանց հավերժ ապրելը կենդանի դժոխք կլիներ: Կենաց ծառից ուտելը կասեցնելով՝ Աստված կանխահայտնեց Իր փրկագնման ծրագիրը, որն Աստծով կյանքի հնարավորություն է: Մինչդեռ բարու և չարի գիտության ծառից արգելվում է ուտել: Այս պատվիրանն իր հետ բերում է հետևանք, որ այն օրը, երբ Ադամն ուտի դրանից, նա կմահանա (Ծնն. 2:17): Այն, ինչպես մյուս ծառերը, հաճելի էր աչքին և օգտակար էր ուտելու համար (Ծնն. 2:9, 3:6): Ուտելով այն՝ մարդկությունը ձեռք է բերում գիտելիք և խորաթափանցություն, բարու և չարի հարցերում իշխանություն:

Բարու և չարի իմացությունը ենթադրում է նաև իշխանություն գործադրել և դատողություն բանեցնել: Դա այն է, ինչ Աստված անում է արարչագործության ողջ ընթացքում: ➥ էջ 8

ԴԱՍԸ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ: ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայոց կաթողիկոսի՝ Գրիգոր Քարավեժի կարճատև աթոռակալումը և մահը

Երիտասարդ հոգևորական Գրիգոր Ե Քարավեժը հաջորդել է Գրիգոր Դ Տղային (1193–1194): Նա Գրիգոր Դ Տղայի ազգականն էր՝ Պահլավունի Ապիրատյանների նշանավոր տոհմից: Մ. Օրմանյանը, խոսելով Գրիգոր Դ Տղայի մահվանից հետո ստեղծված վիճակի մասին, նշում է, որ այդ ժամանակ Ամենայն Հայոց Կաթողիկոսական Աթոռի հավանական թեկնածուներից էին Գրիգոր Ապիրատ և Ներսես Լամբրոնացի եպիսկոպոսները, որոնք բավական ազդեցիկ հոգևորականներ էին Կիլիկյան Հայաստանում: Բայց այդ երկու թեկնածուներից և ոչ մեկն էլ չառաջադրվեց, քանի որ Լևոն Մեծագործը և հայ բարձրաստիճան հոգևորականության մեծ մասը կաթողիկոսի ընտրության հարցում այլ որոշում կայացրին:

Այսպես՝ Գրիգոր Դ Տղա Կաթողիկոսի մահվանից հետո Լևոն Բ իշխանապետը և հայ իշխանական վերնախավը պաշտպանեցին երիտասարդ հոգևորական Գրիգոր Ե Քարավեժի թեկնածությունը, որն ընդամենը 22 տարեկան էր: Լևոն Բ-ի աջակցությունը Գրիգոր Քարավեժին նպատակ ուներ սիրաշահելու բուն Հայաստանի հոգևորականությանը: Բանն այն է, որ բուն Հայաստանի հոգևոր ներկայացուցիչներն էին առաջ քաշել նրա թեկնածությունը՝ մերժելով կամ կանխելով հատկապես Գրիգոր Ապիրատի ու Ներսես Լամբրոնացու կաթողիկոսական հավակնությունները, քանի որ նրանց դիտում էին որպես լատինամետ գործիչների: Իհարկե, վերը նշված ժամանակաշրջանում Կիլիկիայում կային արժանի հավակնորդ մի շարք այլ հոգևորականներ ևս, սակայն բուն Հայաստանի նկատմամբ վերաբերմունքը կարելի է բացատրել այն պարզ հանգամանքով, որ հայոց իշխանապետը երազում էր հայկական բոլոր հողերն ազատագրել օտարերկրյա տիրապետությունից և դրանք միավորել իր իշխանության ներքո: Նա ցանկանում էր մի այնպիսի անձի տեսնել կաթողիկոսական աթոռին, որն ընդունակ կլիներ աջակցելու իրեն: Արժե նաև նշել, որ «Թուղթ առ Լևոն արքայն հայոց» աշխատության մեջ Ներսես Լամբրոնացին ոչ միայն դեմ է եղել Գրիգոր Ե Քարավեժի ընտրությանը, այլև շատերին է համոզել, որ այդ «մանուկը» կաթողիկոս չընտրվի: Չնայած Լևոն Մեծագործը մի քանի անգամ հրավիրել է Ներսես Լամբրոնացուն և համոզել, որ վերջինս գա և մասնակցի Գրիգոր Ե Քարավեժին կաթողիկոս օծելու ծիսակատարությանը, բայց նա հրաժարվել է: Մի քանի անգամ կանչելուց և ստիպելուց հետո միայն Ներսես Լամբրոնացին ակամայից համաձայնել է և հակառակ իր կամքի՝ կատարել Լևոն Մեծագործի պահանջը:

Սկզբում արքայի և կաթողիկոսի հարաբերությունները բավականին ջերմ էին, սակայն շուտով բարդանում են: Հիշատակման է արժանի Գրիգոր Ե Քարավեժի հետ տեղի ունեցած դեպքը: Ինչպես գիտենք, սկզբում Լևոն Մեծագործը պաշտպանեց նրա թեկնածությունը, բայց երբ կաթողիկոսն արտահայտում է հայ հոգևորականության մեծամասնության կամքը և հավանություն չի տալիս Լևոնի Բ-ի քաղաքական որոշ դիրքորոշումներին, վիճակն արմատապես փոխվում է: Այստեղ հարց է առաջ գալիս, թե արդյոք Հայոց Կաթողիկոսն ունե՞ր լծակ՝ հակազդելու հայոց իշխանապետի վրա: Հավանաբար ուներ: Ճիշտ է՝ նա հայրապետական գահին էր բազմել Լևոն Մեծագործի աջակցությամբ, սակայն Հռոմկլայի Հայոց Կաթողիկոսարանն այս պատմաշրջանում հայ ժողովրդին միավորող միակ իրավական իշխանությունն էր պետականությունը կորցրած ժողովրդի համար: Եվ Հայոց Կաթողիկոսարանը վեր էր Կիլիկիայում և այլուր իշխանության հասած հայկական բոլոր իշխանական տներից: Բացի այդ՝ Հռոմկլայի Կաթողիկոսը գերակա էր հայկական բոլոր իշխանությունների նկատմամբ:

Պատմիչ Սմբատ Սպարապետը հետևյալն է հայտնում Հայոց Կաթողիկոսի մասին. «Տղայ կաթողիկոսն Տէր Գրիգորիս չհնազանդէր ամենեցուն, այլ ինքնիշխանութեամբ ունէր զհայրապետութիւն...»: Ամենայն հավանությամբ կաթողիկոս ընտրվելուց հետո Գրիգոր Ե Քարավեժը հասկանում է, որ ապագայում հնարավոր է Հայոց Եկեղեցուն դավանաբանական լուրջ զիջումներ պարտադրվեն, ուստի առանձին կարևոր հարցերում սկսում է առարկել հայոց մեծ իշխանապետին, չհնազանդվել, ինքնուրույնություն ցուցաբերել, որը, անշուշտ, չէր կարող անհետևանք մնալ: Շատ կարևոր է նաև նշել, որ հատկապես այս շրջանից սկսած՝ Կիլիկիայի հայ իշխանական վերնախավը փորձում է իրեն ենթարկել Հայոց Կաթողիկոսներին՝ պահանջելով նրանց գործուն աջակցությունը հայկական պետության արտաքին քաղաքական հարցերում:

Խնդիրն այն է, որ 12-րդ դարի 90-ական թվականներին Լևոն Մեծագործը փորձում էր որոշակի զիջումների գնով միջազգային ճանաչում ձեռք բերել և ճանաչվել արքա եվրոպական միապետերի կողմից, իսկ Հայոց Կաթողիկոսը հավանաբար ցանկանում էր պաշտպանել Հայ Առաքելական Եկեղեցու ինքնուրույնությունը: Այս փուլում Եկեղեցու և պետության հարաբերությունները խիստ սրվում են:

Փաստորեն՝ Հայոց Կաթողիկոսը փորձում է պահպանել Հայ Եկեղեցու անկախությունը և ավանդական դիմագիծը: Իհարկե, դա շատ օրինական է և ճիշտ, սակայն նրա հակառևմտյան քաղաքականությունը հանդիպում է Լևոն Բ իշխանապետի և ամենայն հավանականությամբ մի շարք այլ իշխանների դժգոհությանը, քանի որ Կիլիկյան Հայաստանում գրեթե միշտ գործել էին արևմտամետ դիրքորոշում ունեցողները: Բացի այդ՝ 12–14-րդ դարերում Կիլիկյան Հայաստանի կախվածությունն Արևմուտքից պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ շատ իշխաններ և հետագայում նաև երկրի արքաները Արևմուտքի հետ կապվում էին խնամիական կապերով, իսկ մի մասն էլ՝ տնտեսական համագործակցությամբ ու սեփական շահերով:

Այս շրջանում Լևոնը Կիլիկիայի թագավորությունը ճանաչելու նպատակով շատ եռանդուն բանակցություններ էր սկսել և՛ Բյուզանդական կայսրության, և՛ Հռոմի պապական աթոռի ներկայացուցիչների հետ: Քանի որ Հայոց Կաթողիկոսը դեմ էր որևէ դավանական զիջման, հայոց իշխանապետը որոշում է ազատվել կաթողիկոսից և հրամայում է եկեղեցական ժողով հրավիրել, որը սակայն տեղի չունեցավ: Արևելյան վարդապետներն անշուշտ պաշտպանելու էին Հայրապետին և վիժեցնելու Լևոն Մեծագործի ծրագրերը: Շուտով Գրիգոր Ե Քարավեժն ամբաստանվում է իր հակառակորդների կողմից:

Լևոն Մեծագործը Սսի Հովհաննես եպիսկոպոսին ուղարկում է Հռոմկլա և ձերբակալել տալիս կաթողիկոսին՝ մեկուսացնելով Կոպիտառում: Չնայած կաթողիկոսական բերդի զինվորները զենք են վերցնում՝ իրենց տիրոջը պաշտպանելու, սակայն Հովհաննեսի կողմնակիցներն ավելի զորեղ են գտնվում: Հարց է առաջանում՝ արդյոք Լևոնը՝ որպես Կիլիկյան պետության ղեկավար, իրավասո՞ւ էր Հայոց Կաթողիկոսին ձերբակալելու, երբ Հռոմկլայի Կաթողիկոսարանը դեռևս չէր մտնում Կիլիկիայի իշխանության սահմանների մեջ: Ճիշտ է՝ Գրիգոր Ե Քարավեժը հայոց իշխանապետի օգնությամբ էր դարձել Ամենայն Հայոց Կաթողիկոս, սակայն ներկայացնում էր ողջ հայությանը: Եվ նման պայմաններում Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարող էր դիմել Եգիպտոսի սուլթանին, քանի որ Հռոմկլայի Հայոց Կաթողիկոսարանը գտնվում էր նրա իշխանության տարածքում: Կաթողիկոսը չի ցանկացել, որ Կիլիկիայի հայկական իշխանության և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունները բարդանան:

Փաստորեն՝ կաթողիկոսը չի համաձայնել հետևել Լևոն Մեծագործի և նրա համախոհների զիջողական քաղաքականությանը, անգամ հանձն չի առել կաթողիկոսական կնիքով և ստորագրությամբ վավերացնել Հռոմեական Եկեղեցուն հաղորդվելիք զիջողական հայտարարությունները: Սա այն եզակի դեպքից էր, երբ Հայոց Կաթողիկոսին բանտ էին նստեցնում առանց քննության ու եկեղեցական ժողովի:

Շուտով Լևոն Մեծագործը թուղթ է գրում Հայաստանի հոգևորականներին՝ նրանց կարծիքն իմանալու ակնկալիքով, սակայն մինչ պատասխան ստանալը Հայոց Կաթողիկոսին գտնում են բերդի պարիսպների մոտ՝ անշնչացած ընկած, մեջքին՝ պարան (այդտեղից էլ Քարավեժ՝ ժայռից ցած գլորված կամ գահընկեց արված):

Ի՞նչ էր իրականում տեղի ունեցել, ինչպիսի՞ պայմաններում սպանվեց Հայոց Կաթողիկոսը:

Շատ հավանական է, որ Լևոն Մեծագործը չի ցանկացել բարդացնել հարաբերությունները կաթոլիկ տիրակալների հետ, որոնք իրեն թագ էին խոստացել: Բացի այդ՝ հնարավոր է, որ որոշ քաղաքական և հոգևոր անձինք ամբաստանում էին Հայոց Կաթողիկոսին Լևոն իշխանապետի մոտ: Չի բացառվում նաև, որ հայոց իշխանապետը դիտավորյալ է օգնել երիտասարդ հոգևորականին՝ բազմելու հայոց հայրապետական գահին՝ հույս ունենալով՝ հետագայում նրան ամբողջությամբ իր վերահսկողության տակ պահելու, բայց կարճ ժամանակ անց հայոց իշխանապետը համոզվեց, որ իր այդ հաշվարկը սխալ է դուրս եկել:

Ի՞նչ հանգամանքներում տեղի ունեցավ Գրիգոր Ե Կաթողիկոսի մահը: Հայ պատմիչներն այնպես են ներկայացնում դեպքը, որ իբր Հայոց Կաթողիկոսը պարան է պատրաստել, որպեսզի գիշերը պատուհանից իջնի և փորձի փախչել, բայց պարանը կտրվել է, և նա ընկել է ու մահացել: Հավանաբար միջնադարյան հայ պատմիչները, իրենց երկերում նշյալ խնդրին անդրադառնալով և նման գնահատական տալով, փորձել են մեղմել իրավիճակը և ցույց տալ, թե հայոց իշխանապետը մեղավոր չէր կատարված դեպքի համար, և կաթողիկոսի մահվան պատճառն այլ է: Ըստ հայ պատմիչների՝ Հայոց Հայրապետին համոզելով, թե իբր ուզում են փախցնել, գիշերով իջեցրին բերդապարսպից, բայց քանի որ Գրիգոր Ե Քարավեժը հաղթանդամ ու մեծամարմին երիտասարդ էր, պարանը, որով վերջինիս իջեցնում էին, կտրվեց, գուցե և, ինչպես ասում են, կտրեցին, և նա, ընկնելով բարձրությունից, մահացավ: Բայց, ամեն դեպքում, եթե Հայոց Կաթողիկոսի դեմ դավադրություն չկազմակերպվեր, ապա նրան ո՛չ կձերբակալեին, ո՛չ էլ բանտ կնստեցնեին:

Իհարկե, շատ դժվար է հստակ գնահատական տալը: Ճիշտ է՝ մի կողմից Հայոց Կաթողիկոսի սպանությունը կարող էր կազմակերպված լինել Լևոն Մեծագործի կողմից՝ իր դեմ արտահայտվելու համար, սակայն կարող է այլ տարբերակ ևս լինել, քանի որ եթե իրականում Լևոն Բ իշխանապետը ցանկանար վերացնել Գրիգոր Ե Քարավեժին, ապա նա ինչո՞ւ պետք է հրապարակային ձևով փորձեր ժողով հրավիրել, դիմում հղեր արևելյան վարդապետներին, ձերբակալել տալ և ամբողջ ուշադրությունն իր վրա սևեռեր: Ցանկության դեպքում հայոց իշխանապետն առանց աղմուկի կկարողանար հենց Հռոմկլայի բերդաքաղաքում կազմակերպել վերջինիս սպանությունը, և ոչ ոք նրան չէր կասկածի: Շատ հավանական կարող է լինել այն տեսակետը, որ այդ սպանությունը կազմակերպված և իրականացված լիներ մի խումբ լատինամետների կողմից, որոնք փորձել էին օգտվել Լևոն Մեծագործի և Գրիգոր Ե Քարավեժի միջև ծագած վեճից:

Արամ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, պ. գ. թ.

ՅՈԹ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

(ակրոստիքոսներ)

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

Մկրտությունն իմ օրհնի՛ր, Տե՛ր Աստված,
Կորստյան մատնող մեղքից ազատի՛ր,
Րաբբունապետի՛ր ուսմունքդ վսեմ,
Տո՛ւր ինձ Սուրբ Հոգովդ վերստին ծնվել,
Ու թող որ մեռնի հին մարդը իմ մեջ:
Թողությո՛ւն շնորհիր բազում մեղքերիս,
Յուղով սուրբ օծի՛ր մարմինս տկար,
Ու թող Քրիստոսի սուրբ ողորմությամբ
Նորոգված ծնվեմ ջրից ու հոգուց:

ԴՐՈՇՄ

Դրոշմը Սուրբ Հոգու դի՛ր սրտիս վրա, որ նույն
Րոպեին ճշմարիտ Հոգին իմ մեջ հաստատվի,
Ոտքերս օծի՛ր մյուռոնովդ սուրբ, որ
Շնորհներով պսակազարդված քայլեմ անսասան՝
Մերձենալով Սուրբ Էությանդ հետ:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ

Ապաշխարության աղոթքի ժամին
Պաղատում եմ Քեզ, Աստվա՛ծ երկնային,
Անբան ծառայիս մի՛ արհամարհիր,
Շնորհներիցդ մի՛ զրկիր անհույս տարակուսածիս,
Խիզախություն տո՛ւր գիտակցելու մեղքերս անթիվ:
Աստվածային Քո ողորմությամբ
Րոպե՛ դարձրու տանջանքներս անվերջ,
Ուղեցո՛ւյց եղիր հավիտենական կյանքի ընթացքին,
Թո՛ւյլ տուր անհիրավ օրհնազանցիս
Յուրաքանչյուր պահ լինել Քո կողքին:
Ու թող աղերսն իմ ապաշխարության
Նանիր մեղքերից ինձ ազատի հար:

ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Հիսո՛ւս Քրիստոս, Որդի՛ Աստուծո,
Անմահություն, հարություն և կյանք,
Ղազարոսին ինչպես կենդանացրիր
Ողորմությամբ Քո աստվածային,
Րաբբունաբար ինձ էլ շնորհի՛ր
Դալուկ մահվանից քայլել դեպի կյանք:
Ու հաղորդության խորհուրդը Քո սուրբ
Թող ինձ հիշեցնի մշտնջենապես
Յուրայիններիդ հետ ընթրիքը Զատկի, երբ
Ուխտ սահմանեցիր մարմինդ զոհել,
Նոր Ուխտի Արյամբ աշխարհը փրկել:

ՊՍԱԿ

Պարգևի՛ր, Տե՛ր իմ, ինձ երջանկություն
Սուրբ Հոգուց բխող շնորհներով Քո,
Ամուսնությունն իմ թող օրհնյալ լինի
Կենարար խաչիդ հովանու ներքո:

ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ձեռքդ ամենազոր ու անպարտելի
Եկեղեցու վրա դի՛ր, Քրիստո՛ւս,
Ռազմիկներիդ հոգևորական
Նենգ թշնամու ահից պաշտպանի՛ր,
Աբեղաներիդ շնորհազարդի՛ր՝
Դարմանելու փառահեղ շնորհով:
Րաբբունապետի՛ր հոտդ երկրային,
Ուղղորդի՛ր նրան անխախտ ընթացքի:
Թող քահանաներիդ սուրբ մկրտությամբ
Յուրաքանչյուր հայ քրիստոնյա դառնա,
Ուխտակից լինի սուրբ Խորհուրդներին՝
Նախասահմանված Արարչիդ կողմից:

ՎԵՐՋԻՆ ՕԾՈՒՄ

Վշտերից տանջված տեռատես կնոջը
Երկարատև հիվանդությունից
Րոպեական ապաքինեցիր,
Ջերմը սաստեցիր Պետրոսի զոքանչի,
Ի ծնե կույրին շնորհեցիր տեսություն,
Նվաղ ու թշվառ անդամալույծին ոտքի հանեցիր:
Օծի՛ր սուրբ յուղով նաև
Ծառայիդ հիվանդ ու հյուծված,
Ուղղի՛ր դեպի կյանք հավիտենական՝
Մեղքերից զազիր իսպառ արձակված:

ՅՈԹ ՄԱՀԱՅՈՒ ՄԵՂՔԵՐ

ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Հպարտությունը սնապարծական
Պարուրել է մեղսավոր հոգիս,
Արհամարհանքն ու գոռոզությունը
Րոպե առ րոպե ավելանում են
Տգետ, մեծամիտ
Ու ինքնահավան անձիս խորանում:
Թողությո՛ւն շնորհիր, Տեր ամենագութ,
Յոթ մեղքերից ամենասաստիկ և
Ուժգնալի ախտից ազատի՛ր
Նենգ ու եսամոլ ամբարտավանիս:

ՆԱԽԱՆՁ

Նախանձով լցված սիրտս չարակամ
Ապականվել է նենգ խորհուրդներով,
Խավարն է պատել հոգիս մեղավոր:
Ազատի՛ր, Տեր իմ, այս զազիր մեղքից,
Նորից պարգևի՛ր Սեր աստվածային
Ձառ ու անկամորդ չարահավանիս:

ԲԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Բարկությամբ լցված սիրտս չարանենգ
Ամենաչնչին առիթից անգամ
Րոպեաբար պոռթկում է ցասկոտ,
Կորցնում իսպառ ինքնազսպումն
Ու կորստյան մատնում ախտավոր
հոգիս:
Թողությո՛ւն շնորհիր, Տեր ամենագութ,
Յոթ մեղքերից ամենաստոր
Ու պարսավելի ախտից ազատի՛ր
Նենգախոհ, ջղային մոլեգնահարիս:

ԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Ագահությունն ընչասիրական
Գերել է անձիս էությունն արար,
Անհագուրդ միտքս կենտրոնացել է
Հղփասեր, շվայտ ցանկությունների
Ու եսակենտրոն ապրուստի վրա:
Թողությո՛ւն շնորհիր, Տեր ամենազոր,
Յոթ մեղքերից ամենազազիր
Ու անպատվելի ախտից ազատի՛ր
Նսեմ ու ժլատ արծաթապաշտիս:

ԾՈՒԼՈՒԹՅՈՒՆ

Ծուլությունը՝ աշխատանքատյաց,
Ունայնատենչ և ձանձրույթառատ,
Լցրել է հոգիս հուսահատությամբ,
Ուժազուրկ դարձրել մարմինս տկար:
Թողությո՛ւն շնորհիր, Տեր ամենագութ,
Յոթ մեղքերից ամենանշավակելի
Ու շնորհազերծ ախտից ազատի՛ր
Նվաղ ու անզոր դատարկակյացիս:

ՈՐԿՐԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ

Որկրամոլությունը երկրասիրական
Րոպե առ րոպե բազմապատկվում է
Կրքոտ ու անկուշտ մարմնիս անոթում:
Րախճանքները՝ առօրեական,
Արատաբեր ու մարմնակործան,
Մեղսավոր անձս դարձրել են գերի:
Որովայնապաշտ անձս ապական
Լցվել է իր ողջ էությամբ
Ուտել-խմելու անհագ փափագով միայն:
Թողությո՛ւն շնորհիր, Տեր պարգևատու,
Յոթ մեղքերից ամենաանարգ
Ու նախատելի ախտից ազատի՛ր
Նանրասեր, ագահ մեղանչականիս:

ԲՂՋԱԽՈՀՈՒԹՅՈՒՆ

Բղջախոհությունը ցանկասիրական,
Ղեկավարելով միտքս սասանվող,
Ջանասիրաբար համակել է
Ախտավոր անձիս էությունը ողջ:
Խայտառակ, պագշոտ պատկերներն
անթիվ
Ողողել են մտքիս հորիզոնն աղտոտ,
Հեշտասիրությամբ լցրել մարմինս
Ու ապականել հոգիս վավաշոտ:
Թողությո՛ւն շնորհիր, Տեր ամենագութ,
Յոթ մեղքերից ամենապիղծ
Ու մարմնակործան ախտից ազատի՛ր
Նանիր, հեշտամոլ ամոթահարիս:

ԱՆԻ ՆԱԶԱՐՅԱՆ

Սուրբ Անդրե զորավարի և նրա բանակի, Կալինիկոս և Դոմետիոս վկաների հիշատակությունը

↩ էջ 2, 3

Սրբի խոսքերից զորացած՝ ամբողջ բանակը միաբան դուրս եկավ Քրիստոսի անվան համար մարտիրոսություն ընդունելու և Երկնքի արքայության փառքի պատմուճաններով զգեստավորվելու: Նահատակությունից առաջ իրենց հայացքները երկինք ուղղեցին ու վերջին աղոթքը վերառաքեցին, և բոլորը սրի քաշվեցին՝ այլևս անդամագրվելով Տիրոջ հաղթանակած բանակին: Իսկ հեղված արյան վայրում բժշկության մի աղբյուր բխեց՝ հիվանդների ախտերը ամոքելու համար: Պետրոս և Նունոս եպիսկոպոսները, գալով այս վայրը, գտան թե՛ կենդանի աղբյուրը, թե՛ վկաների սուրբ մասունքները, որոնք ծածուկ ամփոփեցին հանգստյան վայրում:

Հալածանքների այս նույն շրջանում է ապրել Սուրբ Կալինիկոս վկան, որը նույնպես ծագումով Կիլիկիայից էր: Նա մանկուց դաստիարակվել էր քրիստոնեական ոգով՝ արդարության քաղցն ու ծարավը իր հոգում: Սակայն ժամանակի զարհուրելի հալածանքների պատճառով նա բացահայտ չէր խոսում իր քրիստոնյա լինելու մասին: Ապրելով Գաղատիայում՝ զբաղվում էր ձեթի վաճառքով, ինչից ստացած շահույթն օգտագործում էր քրիստոնյա քույրերին ու եղբայրներին օգնելու համար, իսկ եկեղեցիներին ձրիաբար ձեթ էր տրամադրում: Վաճառականի մասնագիտությանը բնորոշ՝ նա ամեն տեղ ելումուտ ուներ և ամեն առիթ օգտագործում էր Քրիստոսի խոսքի քարոզչության համար՝ առանց վախի և ամոթի, ինչպես Պողոս առաքյալն է ասում.«Ես ամոթ չեմ համարում Ավետարանը, որովհետև այն Աստծու զորությունն է՝ բոլոր նրանց փրկության համար, ովքեր հավատում են» (Հռոմ.1:16):

Աստծո փրկարար խոսքը Կալինիկոսի միջոցով շատերին փոխանցվեց, և շատերը դարձի եկան: Իմանալով այդ մասին՝ Անկյուրիայի հեթանոս վաճառականները մատնեցին երանելուն քաղաքի վերակացու Սակերդոնի ձեռքը, որն աչքի էր ընկել քրիստոնյաների հանդեպ իրականացրած դաժան հալածանքներով: Նրա հրամանով երիտասարդ Կալինիկոսին ձերբակալում են և ատյանի առաջ կանգնեցնում: Սկզբում կուսակալը ցանկանում է մեղմ խոսքերով սիրաշահել Կալինիկոսին, որ նա ուրանա Քրիստոսին և զոհ մատուցի հեթանոս կուռքերին, սակայն նա աներեր է մնում իր հավատի մեջ, ինչից զայրանալով՝ Քրիստոսի հալածիչը հրամայում է մահակներով ծեծել և երկաթներով քերել նրա կողերը, ինչը նահատակի համար տանջանք չէր, այլ՝ երանություն: Կալինիկոսի համարձակ և հաստատուն պատասխանները բորբոքում են անհաշտ կուսակալի բարկությունը, որը հրամայում է երկաթե բևեռներ գամել նրա ներբաններին, ապա Անկյուրիա քաղաքի միջով քայլեցնել նրան հեծյալ զորքի առջևից ու տանել Գաղատիային սահմանակից Պափլագոնիա նահանգի Գանգրես քաղաքը և այնտեղ հրկիզել՝ ի տես բոլոր քրիստոնյաների, որ ահաբեկեն նրանց:

Գողգոթայի պես ձգվող այդ ճանապարհին սուրբը տանջանքների անասելի ցավը կրում էր սիրով և ուրախությամբ: Ճանապարհը դժվարին էր, իսկ զինվորները, որոնք ուղեկցում էին դատապարտյալին, ծարավից թուլանում և ուժասպառ էին լինում: Նրանք դիմում են սրբին՝ ասելով. «Եթե ճշմարիտ են քո ասած խոսքերը, ապա ջուր բխեցրու այս անապատ վայրում՝ խնդրելով քո Աստծուն, Ով, ինչպես ասում ես, Արարիչն է բոլոր արարածների»: Այնժամ սուրբն աներկբա հավատքով և Աստծուն ապավինելով ծնրադրում, լուռ աղոթում է, և այդ անջրդի հողում՝ Մատրիկե կոչվող տեղում, ապառաժից սառը և քաղցրահամ ջուր է բխում: Զինվորները խմում ու զովանում են, գոհանում Աստծուց, և նրանցից ոմանք հավատում են Աստծուն: Մահապատժի վայր հասնելով՝ շնորհապարտ զինվորներն ակնածում էին և չէին ցանկանում մասնակիցը դառնալ սրբի նահատակությանը, իսկ երանելին հորդորում էր նրանց կատարել կուսակալի հրամանը: Վախենալով բռնավորից և լսելով սրբի խոսքերը՝ նրանք խարույկ են վառում Գանգրեսի հրապարակում և հրկիզում Քրիստոսի մեծ վկային՝ գերերջանիկ Կալինիկոսին: Բարեպաշտ մի կին վերցնում է նրա նշխարներն ու պահում, մինչև որ դադարեն հալածանքները: Ապա մի վկայարան է շինում Գանգրես քաղաքում, որտեղ ամփոփում է նշխարները, ուր շատ բժշկություններ էին լինում՝ ի փառս Աստծո:

Դիոկղետիանոս կայսեր կողմից իրականացրած քրիստոնեական մեծ հալածանքին զոհ գնաց նաև Դոմետիոս վկան: Նա ծագումով Կիլիկիայի նշանավոր Տարսոն քաղաքից էր՝ ազնվական ընտանիքի ժառանգ: Բարեպաշտ և աստվածասեր երիտասարդը հմուտ բժիշկ էր՝ տիրապետելով բժշկության բոլոր՝ թե՛ Ասկլեպիոսի, թե՛ Հիպոկրատի և թե՛ Գաղիանոս Մեծի հմտություններին: Բացի այդ, լինելով Աստծո ընտրյալ անոթ, Տիրոջ կողմից բժշկության շնորհ էր ստացել, ինչպես նախկինում առաքյալները և մարգարեները: Շրջում էր ամենուր և ձրիաբար բժշկում մարդկանց ոչ միայն մարմնապես, այլև հոգեպես, Քրիստոսի օրինակով, Որ մարդկանց բժշկում էր մարմնով, հոգով և մտքով: Նա բոլորին ուսուցանում էր անսասան մնալ ճշմարիտ հավատի մեջ, խորշել կուռքերից, չվախենալ հալածանքներից, որոնք միայն այս ժամանակավոր կյանքը կարող են մեզանից խլել՝ փոխարենը Քրիստոսի հավիտենական և անանց ժառանգության խոստումը տալով: Նման քարոզչությունը չափազանց մխիթարող և քաջալերող էր, հատկապես հալածանքներով լի այդ օրերին, երբ քրիստոնյաները երկմտանքի և վախի մեջ էին:

Քրիստոսի անվան համար մեծ զրկանքների և նեղությունների մատնված եղբայրներին հուսադրելու համար Դոմետիոսը թողեց Տարսոնը և մեկնեց Բյութանիա՝ հաստատվելով կայսերական Նիկիա քաղաքում: Այստեղ էլ նա, իր նախկին համոզումի համաձայն, շրջում էր հրապարակներում, բժշկում հոգածությունից զուրկ և անտեսված մարդկանց՝ փոխանցելով նաև Ճշմարիտ և Կենդանարար հավատի լույսը: Հալածանքների պատճառով բազմաթիվ քրիստոնյաներ, խոստովանողներ և վկաներ հայտնվել էին բանտերում, և նա, բանտապետերի գրպանները լցնելով, համարձակ այցելում էր նրանց և բժշկում վերքերն ու խոցերը: Քաջասիրտ և Քրիստոսի համար իրենց անձը ուրացած հավատացյալներին գովերգում էր, իսկ տկարներին իր խոսքերով քաջալերում ու ամրացնում՝ մշտապես հիշեցնելով Քրիստոսի այն խոսքը թե. «Մի՛ վախեցեք նրանցից, որ մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարողանում: Այլ դուք հատկապես վախեցե՛ք նրանից, ով կարող է թե՛ հոգին և թե՛ մարմինը կորստյան մատնել գեհենի մեջ» (Մատթ.10:28): Այս և նման շատ այլ խոսքերով ու Սուրբ Հոգով բոցավառում էր նրանց՝ Քրիստոսին խաչակից լինելու և Նրա փառքին հաղորդ դառնալու:

Սակայն հեթանոսներից ոմանք, տեսնելով նրա համարձակ քարոզչությունը, լուր տվեցին Մաքսիմիանոս կայսրին, թե Դոմետիոս անունով մեկը մարդկանց բժշկելու պատրվակով եկել է Նիկիա, սակայն բոլորին մոլորության մեջ է գցում՝ հեռացնելով նրանց հեթանոս աստվածների պաշտամունքից: Կայսրը, որ մինչ այդ լսել էր մեծահամբավ բժշկի մասին, հրամայեց նրան շղթայակապ իր մոտ բերել: Երբ երանելի Դոմետիոսը, իր սովորության համաձայն, հրապարակում քարոզում էր և բժշկում մարդկանց, դահիճները գալիս ու շղթաներ են դնում նրա ձեռքերին ու պարանոցին և տանում Նիկոմեդիա: Ճանապարհին սուրբը մտածում էր թե՛ այնտեղ թողած իր եղբայրների, թե՛ իրեն սպասող վախճանի մասին, քանզի կասկածում էր, որ կայսրը կխնայի իրեն և խաբեությամբ կհրաժարեցնի իր հավատից:

Երբ փոքր-ինչ հեռացել էին քաղաքից, Դոմետիոս վկան խնդրում է իջեցնել իրեն գրաստից՝ Աստծուն աղոթելու համար: Նրա հանդեպ ակնածանքն այնքան մեծ էր, որ անկարող եղան մերժել խնդրանքը: Երանելին մի փոքր հեռացավ, ծնրադրեց և աղոթք ուղղեց առ բարձրյալ Աստված: Երբ Ս.Դոմետիոսը ավարտեց աղոթքը, բարձրաձայն գոչեց՝ ամեն, և հոգին ավանդեց ի Քրիստոս:

Նկատելով սրբի երկարատև բացակայությունը՝ զինվորները գնացին նրա հետևից և մահացած գտան: Խուճապահար զինվորները որոշեցին կտրել նրա գլուխը և տանել կայսրին, ինչի պատճառով կուրացան: Լսելով սրբի մահվան և կուրացած զինվորների մասին՝ կայսրը խիստ տրտմեց ոչ այնքան իր զինվորների, որքան սուրբ նահատակի համար: Այնժամ կայսրը հրամայեց գտնել գլխատված մարմինը և միասին դնել շիրիմի մեջ: Երբ զինվորները կատարեցին հրամանը, նրանց տեսողությունը վերականգնվեց, բայց ոչ միայն մարմնի, այլև հոգու, քանզի հավատացին Քրիստոսին և Նրա կենարար խոսքին: Հետագայում՝ հաղթական պատերազմներից և ամբարիշտ կայսրերին հեռացնելուց ու քրիստոնեական կրոնի հռչակումից հետո, քրիստոսապսակ Կոստանդիանոս կայսեր հրամանով Ս. Դոմետիոսի անունով երեք վկայարան կառուցվեց, որտեղ ամփոփվեցին սրբի մասունքները:

Սրբերի և մարտիրոսների դերն անուրանալի է քրիստոնեական եկեղեցու ձևավորման և զարգացման գործում, քանզի նրանք եղան Քրիստոսի կողմից կառուցվող Եկեղեցու շինարարները: Նրանք քրիստոնյայի գերազանցության օրինակներ դարձան՝ փորձելով գնալ Քրիստոսի խաչի ճանապարհով՝ զերծ աշխարհային մտածումներից և հոգսերից, ապրելով այս կյանքը Երկնքի արքայության սպասումով, այլ ոչ անցավոր կյանքի նվաճումներով: Ամենքս էլ այս կյանքում հնարավորություն ունենք գտնելու «գեղեցիկ մարգարիտը», սակայն, ի տարբերություն սրբերի, ոչ բոլորս ենք պատրաստ վաճառելու մեր ունեցվածքը՝ այն գնելու համար: Կենդանի հաղորդակցության մեջ լինելով Աստծո հետ՝ սրբերը մեզ փոխանցեցին կյանքի տարաբնույթ փորձությունների հաղթահարման օրինակներ: Սրբերի կյանքը ղեկավարվում էր Հիսուս Քրիստոսով՝ «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը» (Հովհ. 14:6), որի ուղենիշը ծառայության և օրինակի ճանապարհն է, կատարելության, ողորմության և սիրո ընթացքը: Նրանց կատարած հոգևոր խիզախումներն այսօր ոմանց համար անհասկանալի և անտրամաբանական կարող են թվալ, քանզի երկրային կյանքի խորհուրդները տարբեր են Երկնքի արքայության խորհուրդներից, և «Ինչքան էլ որ նայենք, չենք տեսնի, ինչքան էլ որ լսենք, չենք հասկանա» (Մարկ. 4:12):

Անդրե զորավարը, Կալինիկոս և Դոմետիոս վկաները հաջողել էին այս կյանքում, սակայն նրանք չկուրացան անմիտ մեծահարուստի պես՝ միայն այս աշխարհի հոգսը հոգալով, այլ հետևելով Տիրոջ խոսքին, թե. «Ով կամենա իր կյանքը փրկել, այն կկորցնի, իսկ ով իր կյանքն ինձ համար կորցնի, այն կփրկի» (Ղուկ. 9:24), բարեբախտությունը առ ոչինչ համարեցին՝ հանուն Տիրոջ արքայության: Չվախեցան, չամաչեցին, չերկմտեցին, այլ դեմ կանգնելով ահագնացող հալածանքներին՝ տվեցին իրենց ունեցած ամենաթանկը՝ կյանքը: Էլ ինչպե՞ս պիտի արտահայտվի Աստծո և ընկերոջ հանդեպ սերը՝ քրիստոնեության մեծագույն պատվիրանը:

Այսօր, բնականաբար, հանուն Աստծո նահատակության առիթներ չկան, սակայն սիրո արտահայտման բազում առիթներ ունենք մեր կյանքում: Հարցն այն է, թե ինչի՞ց ենք մենք պատրաստ հրաժարվել հանուն քրիստոնեական սիրո՝ մեր անձնական ձգտումների՞ց, հարստությունի՞ց, ցանկասիրությունի՞ց....

Թեև այս աշխարհը կարող է հուսահատեցնող և հիասթափեցնող լինել, սակայն քրիստոնեությունն օգնում է մեզ նավարկելու աստվածային սիրո մեջ, քայլելու այս կյանքում Քրիստոսի հետ՝ Նրա բերած ճանապարհով: Իսկ սրբերը՝ իբրև հաղթանակած բանակի անդամներ, մեզ համար ոչ միայն օրինակներ են, այլև առ Աստված բարեխոսներ:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին Սուրբ Անդրեաս զօրավարին և նրա բանակին, Սուրբ Կալինիկոսին և Դոմետիոս վկային հիշատակում է Վարագա Խաչին հաջորդող հինգերորդ երեքշաբթի կամ Սուրբ Խաչին հաջորդող տասներորդ երկուշաբթի օրը:

Արարատ ՂԱԶԱՐՅԱՆ
Տոնո սրկ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հիսուսի կրթությունն ու մասնագիտությունը

Հիսուս Քրիստոսի կյանքի և վարդապետության վերաբերյալ հետաքրքրասիրությունն ու բանավեճերը գրավում են աստվածաբանական, պատմական և սոցիալ-մշակութային ուսումնասիրությունների տարբեր շերտեր: Այս բազմազանությունից հաճախ առաջանում են հարցեր. ինչ կրթություն ու մասնագիտություն ուներ Հիսուսը, ինչ լեզուներ գիտեր:

Աստվածաշնչում բազմաթիվ վկայություններով հաստատվում է Հիսուսի կարդալու, գրելու և ուսուցանելու ունակությունը: Պատմական համատեքստում այդ վկայությունների ուսումնասիրությունից գիտնականները պարզել են, որ Հիսուսն Իր ժամանակին լավ կրթված էր: Այս մասին նրանք փաստում են Ղուկասի Ավետարանից, ինչպես՝ Հիսուսը մագաղաթ է բացում Նազարեթի ժողովարանում, կարդում է Եսայի մարգարեի գրքից և տալիս Իր մեկնաբանությունը (Ղուկ. 4:16–21): Սա հուշում է Նրա հմտությունների մասին, քանի որ եբրայերեն կարդալու և առանձնապես Եսայի մարգարեի գիրքը մեկնաբանելու համար պետք էր օժտված լինել որոշ կարողություններով: Նման կարողություններ ձեռք էին բերվում սինագոգային դպրոցներում, որոնք հայտնի են որպես «Բեթ Սեֆեր»:

Հետաքրքիր է՝ ինչ լեզուներով է խոսել և կարդացել Հիսուս Քրիստոսը: Նա ապրում էր աշխարհագրորեն նշանակալի վայրում, որտեղ խաչվում էին տարբեր մշակույթներ, ինչը ենթադրել է տալիս, որ Հիսուս տիրապետում էր մի քանի լեզվի: Արամեերենն ամենահավանական լեզուն էր, որով Հիսուս խոսում էր Իր առօրյա կյանքում: Ենթադրվել է, որ Նրա վարդապետությունները, ինչպես նաև աշակերտների և մարդկանց հետ շփումը հիմնականում արամեերեն էին: Պետք է հաշվի առնել նաև եբրայերենի դերը Հիսուսի կյանքում: Եբրայերենը երկրպագության և Սուրբ Գրքի լեզուն էր, և չնայած այն կարող էր ամենօրյա հաղորդակցության լեզու չլինել՝ սուրբ լեզու էր, որը գործածվում էր հիմնականում կրոնական համատեքստում: Ուսումնասիրությունները հնարավոր են համարում նաև Հիսուսի՝ հունարենի իմացությունը:

Հիսուսի կրթական ուղին, ամենայն հավանականությամբ, սկսվել է Իր երկրային հոր՝ Հովսեփի համեստ բնակարանում: Հավանական է, որ Հովսեփը՝ որպես հյուսն, երիտասարդ Հիսուսին է փոխանցել կյանքի կարևոր հմտություններ: Ատաղձագործության մեջ ներգրավված տարրական մաթեմատիկան անխուսափելիորեն պետք է լիներ Հիսուսի ուսուցման հիմքը: Վաղ տարիքում արդեն Հիսուսը նույնպես պետք է սովորեր կարդալ և գրել: Այդ ժամանակ հոր հիմնական պարտականություններից էր իր երեխաներին Սուրբ Գրքի մասին գիտելիքներ տալը:

Երբ քրիստոնյաներին հարցնում են, թե ինչ մասնագիտություն է ունեցել Հիսուսը, նրանք սովորաբար պատասխանում են՝ հյուսն: Սա «տեկտոն» բառի թարգմանությունն է՝ կատարված Լյութերի կողմից: Այնուամենայնիվ, «տեկտոնը» ավելի քիչ աղերսներ ուներ տանիքի վրա փայտյա տեղադրումների հետ: Տեկտոնի արհեստը տներ կառուցելն էր (քարից), այլ ոչ թե փայտամշակումը: Իսրայելում փայտի սակավության պատճառով տունը կառուցվել է հիմնականում քարից կամ փայտից ու կավից: Հետևաբար՝ «տեկտոն» բառը պետք է թարգմանվի որպես «շինարար» կամ «քաղաքացիական ճարտարագետ»: Գերմաներեն «ճարտարապետ» բառը կապված է դրա հետ: Ըստ ժամանակի մշակույթի՝ Հիսուսն այս արհեստը սովորել է Իր երկրային հորից:

Կոզիմո Ռոսսելլի և Պիերո դի Կոզիմո, «Լեռան քարոզ», 1481 թ.

12-ամյա Հիսուսը տաճարում, Հենրիխ Հոֆման, 1884 թ.



Հիսուսը խոսում է Իր տասներկու աշակերտների հետ, Ջեյմս Տիսո, 1850 թ.

Հարգարժան հրեաները տարբերվում էին ոչ հմուտ բանվորներից նրանով, որ ունեին այնպիսի հատուկ կրթություն, ինչպիսին ուներ Հիսուսը: Հնարավոր է, որ Իր արհեստի շնորհիվ նաև Նա կարողացավ հարաբերություններ հաստատել սոցիալական տարբեր դասերի հետ և այդպիսով ավելի լայն ճանաչում ձեռք բերել:

Տեկտոնի մասնագիտությունն այն ժամանակ հարգված էր: Պատմականորեն ապացուցված է, որ դարեր շարունակ Բեթղեհեմի շինարարները մեծ հարգանք են վայելել: Հիսուսի ծննդյան ժամանակ Հերովդես Անտիպաս թագավորը Նազարեթից ոչ հեռու նոր քաղաք էր կառուցում, և ենթադրվում է, որ Հովսեփը մասնակցել է այս խոշոր նախագծին: Բայց սա միայն ենթադրություն է:

Ավետարաններում Հիսուսը բազմիցս հիշատակվում է որպես ռաբբի: Ըստ հրեական ավանդության՝ ռաբբի նշանակում է խիստ կրոնական պատրաստվածություն ունեցող ուսուցիչ կամ գիտնական: Այն փաստը, որ մարդիկ դիմել են Հիսուսին՝ որպես ռաբբիի, հուշում է, որ Նա հարգվել է նաև Իր կրթվածության համար, տիրապետել է Սուրբ Գրքին և գիտեր, թե ինչպես սերմանել գիտելիքներն ուրիշների մեջ: Թալմուդում հիշատակություններ կան Հիսուս Նազովրեցու մասին այն պնդումներով, որ ժամանակակիցները Հիսուսին ռաբբի են ճանաչել: Գիտնականներից ոմանք, ինչպես Անդրեաս Կոստենբերգերը և Ռոբերտ վան Վուրստը, հիմնավորում են այս պնդումները՝ դրանով իսկ Հիսուսի ուսուցիչներին և դաստիարակներին վերագրելով Նրա՝ Սուրբ Գրքին տիրապետելը և ռաբբինիստական դասավանդման ոճը:

Հովհաննեսի Ավետարանում ևս կան վկայություններ, որ տալիս են Հիսուսի գրագիտության ապացույցներ: Սուրբ Գրքի վերաբերյալ Հիսուսի գիտելիքների խորությունն ընդգծում է, որ Նրա գրագիտությունը ամուր հիմնված է եղել եբրայերեն Աստվածաշնչի, Թորայի և հրեական պատմության վրա: Հենց սա էլ թույլ է տվել Նրան նավարկել Իր ժամանակի կրոնական միջավայրում և մեկնաբանել Սուրբ Գիրքը նոր ձևերով, առակներով, որոնք հիմք դարձան քրիստոնեության համար: Հիսուսը հրեա ռաբբի էր, և դա էլ ազդեց Նրա վարդապետությունների և գործողությունների վրա: Հրեական ավանդույթի մասին գիտելիքները, դասավանդելու ունակությունը և ռաբբիի հեղինակությունը ձևավորեցին Հիսուսի ուղերձները և գործողությունները:

Հիսուսի ամենակարևոր կրթությունը Գալիլեայի ժողովարաններում Նրա բազմաթիվ այցելությունների արդյունքում էր: Հիսուսի ժամանակներում կրթական համակարգը հասկանալը խոր հիմք է ստեղծում հենց Հիսուսի կրթությունը հասկանալու համար: Հին հրեական ավանդույթում կրթությունն առանցքային նշանակություն է ունեցել և պատվաստվել է վաղ մանկությունից՝ հիմնական ուշադրությունը դարձնելով կրոնական վարդապետություններին՝ ամենայն խստությամբ և նվիրվածությամբ: Հրեա տղաները շատ փոքր տարիքից հայտնվել են «Բեթ Սեֆեր» տարրական դպրոցում, որտեղ նրանք անգիր են արել Թորան: Այս հաստատությունում ռաբբին նրանց սովորեցնում էր կարդալ և գրել: Այս կրթությունը հիմնված էր այն բանի վրա, ինչն այժմ անվանում են երկխոսային (ինտերակտիվ) մանկավարժություն, որտեղ հարցերն ու բանավեճերը համարվում էին ուսուցման գործընթացի անբաժանելի մաս: Տարրական դպրոցից հետո՝ մոտավորապես 12–13 տարեկանում, այն տղաները, որոնք ցուցաբերել են սովորելու ունակություն, շարունակել են ուսումը Բեթ Թալմուդում, որը մեր ժամանակների ավագ դպրոցն է: Այստեղ նրանք խորանում էին Թորայի մեկնաբանությունների մեջ, որոնք հայտնի են որպես Միշնա՝ հղկելով քննարկումներ վարելու, Սուրբ Գիրքը մեկնաբանելու իրենց մտավոր ունակությունները:

Այս ժամանակահատվածում ի հայտ եկավ կրթության մեկ այլ ձև՝ Բեթ միդրաշը կամ ուսուցման տունը, որը ծառայում էր որպես բարձրագույն կրթության հարթակ, որտեղ վարդապետները քննարկում և մեկնաբանում էին հրեական օրենքի բարդ կետերը: Բացի պաշտոնական ուսուցումից՝ տղաները ձեռք էին բերում նաև գործնական հմտություններ, որոնք անհրաժեշտ էին առօրյա կյանքում, օրինակ՝ արհեստ, որը հաճախ ժառանգվում էր իրենց հայրերից: Հիսուսի դեպքում Նա պետք է ատաղձագործություն սովորեր Հովսեփից:

Հիսուս միշտ քարոզում էր հասարակական վայրերում և, հետևաբար, հայտնի էր հայրենի Գալիլեայի շրջանից շատ հեռու: Ենթադրվում է, որ հրեական ավանդական կրոնական համայնքը դա վտանգավոր է համարել հրեական գրությունների հեղափոխական մեկնաբանության պատճառով և, ըստ երևույթին, պետք է հեռացվեր ճանապարհից: Կարծիք կա, որ Նրան ձերբակալեցին ոչ թե հռոմեացիները, այլ հրեական առաջնորդող շերտը, որն էլ ի վերջո Նրան հանձնեց հռոմեացիներին: Պատմության ավարտը հայտնի է. Պոնտացի Պիղատոսը Հիսուսին մահվան դատապարտեց խաչելության միջոցով:

Սիրվարդ ՍՏԵՓԱՆՅԱՆ, բ. գ. թ.

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Տաթևի վանքը՝ հոգևոր-մշակութային կենտրոն

Իր ամրակուռ բերդերի, անառիկ ամրոցների, մեծաքանակ զինված ուժերի և ռազմապաշտպանական հզորության շնորհիվ Սյունիք աշխարհն առանձնահատուկ հռչակ է վայելել ու հսկայական նշանակություն ունեցել Մեծ Հայքի տարածքային ամբողջականության պահպանման և պետական սահմանների անսասանության ապահովման գործում: Լեռնաստանը միաժամանակ ծանրակշիռ ավանդ է ունեցել Հայաստանի հոգևոր-մշակութային կյանքում՝ նպաստելով հայալեզու դպրության, գիտության, մատենագրության, թարգմանական գրականության զարգացմանը և ազգային ինքնության ու ավանդույթների պահպանմանը:

IX դ. վերջին քառորդին Սյունյաց իշխանանիստ Շաղատ գյուղաքաղաքից Տաթևի վանք է տեղափոխվել Սյունյաց վարդապետարանը: Տաթևը դարձել է Սյունյաց աշխարհի հոգևոր-մշակութային ամենանշանավոր կենտրոնը:

Վանքը մատենագրական աղբյուրներում հանդիպում է նաև Ս. Եվստաթեոս առաքյալի ուխտ անունով (ըստ ավանդության՝ վանքը կոչվել է Թադեոս առաքյալի աշակերտ Եվստաթեոսի անունով): Վանական համալիրն ամբողջացնում են պարսպապատերը, ձիթհանը, Ս. Պողոս-Պետրոս տաճարը, Ս. Աստվածածին մատուռ-եկեղեցին, Ս. Գրիգոր եկեղեցին, Սուրբ Գրիգոր Տաթևացու դամբարանը, «Գավազան» հուշարձանը, սեղանատունը, դասասենյակները, մատենադարանը, ուխտագնացների հյուրատունը, բնակելի տարածքները, խոհանոցը, բազմաթիվ ծառայողական շինություններն ու վանական խցերը: Ըստ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի՝ Տաթևի վանքի առաջին եկեղեցին կառուցվել է IV դ. և ունեցել պարզ տեսք, սակավաթիվ ճգնավոր միաբաններ: Արդեն VIII դ. վերջերին Տաթևը դարձել է Սյունյաց եպիսկոպոսության աթոռանիստը: Տարբեր աղբյուրների համաձայն՝ Տաթևում են պահվել բազմաթիվ սրբություններ (Քրիստոսի խաչափայտի մասունքով արծաթե հսկա (մարդաչափ) «Բաբկենյան խաչը», որը պատրաստել էր Սյունյաց Բաբիկ իշխանի որդի Վասակը), Ս. Հովհաննեսի, Ս. Ստեփանոս Նախավկայի, տասնմեկ առաքյալների, Ս. Գրիգոր Լուսավորչի, Ս. Հռիփսիմեի մասունքները, Աստվածածնի մազերը, ինչպես նաև Բյուզանդիայից բերված «Աստվածամուխ Ս. Նշանը»:

Տաթևի վանական համալիրի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցում պահպանվել է X դ. որմնանկարչական ամբողջական հարդարանքը, որը պատկերացնում է տալիս միջնադարյան հայկական եկեղեցիների նկարազարդման համակարգի մասին: Պատկերներն արվել են հայկական որմնանկարչությանը հատուկ 3–4 մմ հաստության սվաղի վրա՝ տեղական բնական հանքաներկերով, մասնավորապես՝ լաջվարդով: Խորանի կոնքում պատկերված է եղել «Քրիստոսը փառքի մեջ» տեսարանը: Կոր պատի վրա՝ երեք նախշերիզված շարքերով կամարների ներքո, ներկայացված են մարգարեները, առաքյալները և Հայոց Եկեղեցու հայրերը՝ սրածայր խույրերը գլխներին: Առաքյալների շարքում՝ կենտրոնական պատուհանի հյուսիսային և հարավային կողմերից, նկարված են Հովհաննես Մկրտիչը և Աստվածամայրը՝ Քրիստոսի հետ կազմելով «Դեիսուսի» պատկերագրությունը: «Դեիսուսը» (հուն.՝ δέησις (դեիսիս) — *խնդրանք, աղաչանք* բառից) կամ «Բարեխոսությունը» պատկերագրական հայտնի թեմա է միջնադարյան արվեստում, որը կապված է Փրկագործության խորհրդի հետ: «Դեիսուսը» սրբապատկեր է կամ սրբապատկերների խումբ, որի կենտրոնում Հիսուս Քրիստոսի պատկերն է, իսկ Նրանից աջ և ձախ կողմերում Մարիամ Աստվածածնի և Հովհաննես Մկրտչի սրբապատկերներն են՝ ներկայացված բարեխոս աղոթողի ավանդական կերպարով (եռակերպար դեիսուս): Կարող է իր մեջ ընդգրկել առաքյալների պատկերներ, սուրբ հայրերին, մարտիրոսներին և այլոց (բազմակերպար դեիսուս): Դեիսուսյան արվեստի հիմնական իմաստը միջնորդող, բարեխոսական աղոթքն է: Աստվածամոր հետ կապված «Բարեխոսության» դասական թեման (գահին նստած Ամենակալ Քրիստոս, ձախից՝ Աստվածամայրը, աջից՝ Հովհաննես Մկրտիչը՝ որպես բարեխոսներ) հետագայում շարունակվել է խաչքարերի վրա: «Դեիսուսի» թեման ավելի բարդ ու նուրբ իմաստներ է ստացել կիլիկյան մանրանկարչության մեջ: Խորանի հանդիսավոր հորինվածքին հակադրված է արևմտյան պատի «Ահեղ դատաստանի» խիստ դինամիկ տեսարանը, որից պահպանվել են կենտրոնական և ստորին հատվածները. որոշ դրվագներ վերականգնել են 1950–ական թթ. Լ. Դուռնովոյի արած վավերագրական պատճեններով և սխեմատիկ վերակազմությամբ: Տեսարանն ամբողջական մեծ հորինվածքում ներառում է «Ահեղ դատաստանը» և «Փրկչի երկրորդ գալուստը»՝ ըստ Մատթեոսի Ավետարանի (24.30–31) ու Հովհաննեսի Հայտնության գրքի: Վերևում պատկերված է եղել «Երկնային դատաստանը»: Քրիստոս-Դատավորին երկու կողմից շրջապատել են առաքյալները. Պողոսը՝ Քրիստոսի աջ կողմից, և Պետրոսը՝ ձախ, առանձնացած: Գահի տակ երկու բացված գրքեր են, որոնցով, ըստ Հովհաննեսի Հայտնության, պետք է դատվեին մեռյալները (20.12): Հորինվածքի միջնամասն զբաղեցնում են երկու մեծ հրեշտակներ՝ տեքստերով գալարակները ձեռքներին, աջ գալարակի վրա Հայտնության գրքի խոսքերն են՝ «Եկաւ... մեռելների ժամանակը, որ դատվեն» (11.18): Աջ կողմում դրախտի Կենաց ծառն է, ձախ կողմում՝ դժոխքի հրե գետը, որն այստեղ մասամբ կապույտ է, ինչպես Հայտնության գրքի «կենդանի ջուրը» (22.1): Հորինվածքի ամենաուշագրավ մասը ստորին հատվածն է՝ ծածկված մեռելների հարության տեսարանով: Դեն նետելով դագաղների կափարիչները՝ Փրկչի երկրորդ գալստյան դատին են ելնում, կանգնում մեռելները. նրանց կետրոնում են Ադամն ու Եվան: Հյուսիսային պատին պատկերված «Ծննդյան» հորինվածքից պահպանվել են պատուհանների մեջտեղի երկու հատվածները՝ «Մանկան լոգանքը» և «Հովիվների ավետումը»:

Որմնանկարների ոճն ընդգծված արտահայտչականությամբ դրսևորվում է կերպարների ձգվածությամբ, բարդ կեցվածքով ու դիրքերով, տարամասշտաբայնությամբ, դիմագծերի, ժեստերի ընդգծվածությամբ, գծային կառուցվածքների քմահաճ խաղով: Գունային գամման արտասովոր է սպիտակի առկայությամբ, տոնային նուրբ բազմերանգները հարաբերակցված են բաց փիրուզագույն և կապույտ հիմնագույներին: Գեղարվեստական այս ոճը, ինքնատիպ պատկերավորությունը, կերպարների դասականացված շունչը եզակի են հայ արվեստում և մերձենում են IX–XI դդ. իտալական այն որմնանկարներին ու խճանկարներին, որոնք իրենց մեջ կրում են կարոլինգյան և վաղքրիստոնեական արվեստի ավանդույթները:

Տաթևի վանքի որմնանկարները գեղարվեստական բարձր արժանիքների և ինքնատիպության շնորհիվ բացառիկ նշանակություն ունեն միջնադարյան արվեստի պատմության համար, մանավանդ որ X դ. եվրոպական որմնանկարներ գրեթե չեն պահպանվել:

Տաթևի վանքը միշտ էլ հիացմունքի ու ներշնչանքի անսպառ աղբյուր է եղել բոլոր այցելուների համար: Իրենց ստեղծագործություններում Տաթևի հոյակերտ վանքն ու համալիրի հուշարձանների առանձին մանրամասներ, շրջակայքն ու Տաթևին առնչվող իրադարձություններ են պատկերել կերպարվեստի նշանավոր վարպետներ Փանոս Թերլեմեզյանը, Հակոբ Կոջոյանը, Եվգենի Լանսերեն, Էդուարդ Իսաբեկյանը, Հովհաննես Զարդարյանը, Շավարշ Վաղարշակյանը, Դեղձանիկ Մխիթարյանը, Սուրեն Պիպոյանը, Գրիգոր Շարբաբչյանը, Գուրոսը (Գուրգեն Պարոնյան-Հովսեփյանը), Փարավոն Միրզոյանը և այլք:

Այժմ էլ մեծ ժողովրդականություն է վայելում Սյունյաց մեծագույն աշուղ Աշոտի «Սերս վանքում Տաթևի» հոգեթով սիրերգը.

«Սերս վանքում Տաթևի՝ մոմեր վառած կաղոթեր,
Մոտեցա, որ համբուրեմ, ասաց՝ տղա՛, ամոթ է... »:

Արման ՄԱԼՈՅԱՆ, պ. գ. թ.

Սարկավագուհի Հռիփսիմե Թայիրյան: Անտիպ նամակներ

Հռիփսիմե Թայիրյան՝ պարկեշտ ու խոնարհ, անարատ ու լուսեղ անհատականություն, բարեգթության և արդարության մարմնացում՝ արժանի առաքյալի լուսապսակի:

Ծնվել է 1849 թ. մարտի 18-ին: Հոր՝ հայտնի գործարար և բարեգործ Ալեքսանդր Թայիրյանի ցանկությամբ փոքր հասակից գտնվել է Թիֆլիսի Ս. Ստեփանոս կուսանաց անապատի Գայանե Բեհբությանց մայրապետի անմիջական դաստիարակության և հսկողության ներքո: Սարկավագուհի է ձեռնադրվել 1874 թ.: Եղել է Կուսանաց անապատի աչքի ընկնող միանձնուհիներից մեկը: Իր բարեգործությունների և առաքինի վարքի համար կաթողիկոսների կողմից Հռիփսիմե Թայիրյանը պարգևատրվել է լանջախաչով, ականակուռ խաչով, մատանիով, իսկ Երուսաղեմի Հարություն պատրիարքը նրան շնորհել է շքեղ ոսկե խաչ՝ կենաց փայտի մասունքով: Մկրտիչ Ա Խրիմյան Կաթողիկոսի կոնդակով 1904 թ. նշանակվել է մայրապետ Եփրոսինեա սարկավագուհի Աբամելիքյանի օգնական: 1911 թ. հոկտեմբերի 14-ին անապատի իրավասուների ընտրության և Վրաստանի ու Իմերեթի հայոց թեմի ժամանակավոր կառավարիչ Եփրեմ եպիսկոպոսի առաջարկության համաձայն՝ սինոդը Հռիփսիմե սարկավագուհուն հաստատել է Ս. Ստեփանոս կուսանաց անապատի մայրապետի պաշտոնում: Մայրապետական պաշտոնն ստանձնելուց հետո էլ Հռիփսիմե Թայիրյանը շարունակել է բարեսիրական գործունեությունը՝ միաժամանակ հոգ տանելով կուսանոցի կառավարման ու բարգավաճման համար: Իր մայրապետության հենց առաջին ամիսներին իշխան Գ. Բեհբությանի կողմից անապատի անունով մի մեծ հողատարածք նվեր ստացվեց Ծղնեթ գյուղում, որի վրա կարճ ժամանակահատվածում, շնորհիվ Հռիփսիմե մայրապետի ջանքերի, կառուցվեց մի հոյակապ շինություն, որը նախատեսված էր իբրև միաբան քույրերի ամառանոց:

Ազգին ու Հայոց Եկեղեցուն իր կյանքը նվիրաբերած Հռիփսիմե Թայիրյանը մահացել է 1934 թ.: Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի:

Սիլվա ՍՈՒՔԻԱՍՅԱՆ,
գրող, հրապարակախոս

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍԱՀԱԿ Բ-Ի ՆԱՄԱԿԸ ԹԻՖԼԻՍԻ ԿՈՒՍԱՆԱՑ ԱՆԱՊԱՏԻ ՄԱՅՐԱՊԵՏ ՀՌԻՓՍԻՄԵ ԹԱՅԻՐՅԱՆՑԻՆ

24 մայիս 1912 թ.

ՍԱՀԱԿ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Սրբասուն Հռիփսիմեանց կուսկ. Թայիրեանց և Մօր Կուսանաց Անապատին Տփխիսաց, Ուխտակիր և Հօգևոր դստեր մերոց և համայն կուսանաց, որ ընդ խնամով Ձերով, ողջոյն և օրհնութիւն ի մէնջ և ի նահատակաց Կիլիկիոյ:

Գերապատիւ Յակոբ Աշոտ եպիսկոպոսի գրութենէն տեղեկացանք Ձեր գանգատներուն, թէ յԵրուսաղէմ կնքուած անմոռացութեան ուխտերնիս մոռցած ենք և չենք յիշեր զՁեզ և չենք գրեր Ձեզ: Մասամբ միայն իրավացի են Ձեր գանգատները: Սակայն պաշտօնը և բարձր տիտղոսը չեն պատճառ մոռացութեան, որքան մեր տեսած և կրած տառապանքները: Լալու և ողբի ատեն միթէ կարելի է յիշել ուրախ և զուարթ օրերը, Երուսաղէմ իր բոլոր նուիրական և տնօրինական յիշատակներով խեղտուեցաւ ի Կիլիկիա յաշխարհին արեան և աւերի: Այսպիսի եղերական պարագաներու մէջ միթէ իրաւունք կը տաք Ձեզ գանգատելու, թէ մոռցած ենք:

Չը գիտենք Աւետարանն ալ չը լուսաբաներ, արդեօք Ղազարոսը երբ յարութիւն առաւ չորեքօրեայ մեռելութիւնէ ճանչցաւ իր քոյրերը, կամ ըստ առաջնոյն եղբայրական միևնոյն աղապատանքն ունեցա՞ւ: ➥ էջ 8

Բարու և չարի գիտության ծառը

➥ էջ 3

Նա տեսնում է այն, ինչ արել է, և հայտարարում է այն «լավ» (օրինակ՝ Ծնն. 1:10) կամ «շատ լավ» (Ծնն. 1:31) կամ «ոչ լավ» (Ծնն.2:18): Ավելի ուշ Սուրբ Գրությունները հաստատում են այս օգտագործումը, ինչպես՝ երբ Աստված նախազգուշացնում է Լաբանին՝ Հակոբի դեմ բարու կամ չարի դատավճիռ կայացնելուց առաջ. «Աստված գիշերը երազում ասորի Լաբանի մոտ եկավ և ասաց նրան. «Զգուշացի՛ր, որ Հակոբի հետ ո՛չ լավ և ո՛չ վատ չխոսես»» (Ծնն. 31:24): Նմանապես Թեկուեից մի կին Դավթին անվանում է որպես մեկը, ով կարող է դատել բարու և չարի միջև. «Թող իմ տեր թագավորի խոսքը մխիթարություն լինի, որովհետև իմ տեր թագավորը նման է Աստծու հրեշտակի, որը հասկանում է ամեն բան՝ բարին և չարը, և թող քո Տեր Աստվածը քեզ հետ լինի» (Բ Թագ.14:17): Դավիթ թագավորի որդին՝ Սողոմոնը, աղոթում է իմաստության պարգևի համար՝ «բարին և չարն իրարից զանազանելու» (Գ Թագ 3:9): Նոր Կտակարանում Եբրայեցիներին ուղղված թղթի հեղինակը ցանկանում է, որ եկեղեցին հասունանա՝ մի կողմ դնելով մանուկների սնունդը և անցնելով իսկական հոգևոր սնուցմանը, որպեսզի նրանք կարողանան տարբերել բարին և չարը. «Որովհետև ամեն մեկը, ով կաթնակեր է, արդարության խոսքին անփորձ է, քանի որ երեխա է: Իսկ պինդ կերակուրը կատարյալների համար է, որոնց զգայարանները վարժված են բարին ու չարը զանազանելու» (Եբր. 5:13—14): Հետևաբար, օձը չի սխալվում, երբ ասում է կնոջը, որ այդ ծառից ուտելով՝ մարդը կնմանվի Աստծուն (Ծնն. 3:5), ոչ էլ կինն է սխալ գնահատական տալիս. մեծագույն անտեսանելի (լատենտ) մեղքը, որը ծածկված է խոսքի ենթախորքում, Աստծո հնազանդությունից դուրս գալն է և ինքնամեծարմամբ ապրելը:

Հին Կտակարանի եբրայական բնօրինակում այս ծառի անունը բառացիորեն կոչվում է «բարու և չարի» ծառ (עֵץ טוֹב וָרָע / tov vara-թով վառա): Այստեղ կարող է օգտագործված լինել խոսքի ոճական հնարքներից, ոճական դարձույթներից մեկը, որը զուգորդում է հակադիր հասկացությունները՝ ընդհանուր իմաստ ստեղծելու համար, այնպես որ «բարի և չար» արտահայտությունը պարզապես ենթադրում է ամեն ինչ: Սա եբրայերենում տարածված մի ձև է, որը կանոնավոր կերպով օգտագործվում է Աստվածաշնչում՝ մահվան դատավճիռներ պատկերող նկարագրություններում: Նույն իմաստն է ընկած եգիպտական «չար-բարի» արտահայտության մեջ, որը սովորաբար օգտագործվում է «ամեն ինչ» նշանակությամբ: Այնուամենայնիվ, եթե բարու և չարի գիտության ծառը պետք է հասկանալ որպես ծառ, որի պտուղը ամեն ինչի մասին գիտելիք է հաղորդում, այս արտահայտությունը պարտադիր չէ, որ լինի բարոյական հասկացություն:

«Ադամ և Եվա», Տիցիան, 1550 թ.

Բարու և չարի գիտության ծառի վերաբերյալ առկա են բազմաթիվ մեկնություններ և զուգորդություններ. այն կարող է նշանակել իմաստություն, ամենագիտություն, սեռական գիտելիքներ, բարոյական խտրականություն, հասունություն և այլն:

Տրված գիտելիքն իսկապես բարու և չարի իմացության, զանազանման գիտելիք էր, բայց այն գիտելիք էր, որը տրված չէր Աստծո կողմից: Անկումից հետո գիտելիքն սկիզբ է առնում, սնվում մեղավոր ես-ից, որին հայում են Ադամն ու Եվան՝ Աստծուն հայելու փոխարեն, երբ բացվում են իրենց աչքերը. «Եվ նրանց երկուսի աչքերը բացվեցին, և իմացան, որ մերկ են, և թզենու տերևներ կարեցին ու իրենց համար ծածկոցներ շինեցին» (Ծնն. 3:7): Հետագայում բարին և չարը զանազանելու՝ ողջ մարդկության կարողությունը շեղվում է. յուրաքանչյուրն անում է այն, ինչ ճիշտ է իր աչքում (տես Հռոմ. 2:14, Բ Օրին. 12:8, Դատ. 17:6):

Մարդկությունն օտարվում է Աստծուց, աստվածային ներգործուն աշխարհից, մարդիկ՝ մեկը մյուսից և սեփական ինքնությունից: Սա շատ իրական և ծանր մահ է: Մահը, որը մարմնի կենսաբանական գործառույթի դադարեցումն է, հետևանքն է մի աշխարհի, որտեղ մարդն այլևս անհաղորդ է Կենաց ծառին, և որտեղ արդարությունը հաստատված է Աստծո գիտությունից դուրս: Ճիշտ է՝ Ադամը և ամբողջ մարդկային ցեղը ենթակա եղան մահվան՝ բարու և չարի գիտության ծառի պտուղն ուտելուց հետո, սակայն մահը, որը կկրեր նախամեղանչական մարդը, նման կլիներ այն

փոխակերպիչ առանձնացմանը, որին ենթարկվում է տղամարդը կնոջ ստեղծման ժամանակ (Ծնն. 2:21—25): Խոր քունը (եբրայերեն՝ תַּרְדֵּמָה — tardemá- տառդեմա՛), որի մեջ Աստված դնում է Ադամին, դատապարտված վիճակ է, մահվան նման խավարային ու սառնաշունչ, և Աստված նրա մարմնից պոկում է մի մաս: Ադամը արթնացումից հետո հասկանում է, որ ամբողջ աշխարհն այլ է, իսկ ինքն՝ այլ. նա նույնիսկ նոր անուն ունի (Ծնն. 2:23): Հին աշխարհը, որում նա մենակ էր, այլևս չկա, և առաջանում է նոր ու ավելի ամբողջական աշխարհ, որտեղ նա մենակ չէ: Նմանապես ժամանակին պտուղն ուտելու դեպքում մահը կհանգեցներ մի տեսակ անդրանցման, որն աշխարհում ավելի պարզ ձևի ավարտ կլիներ, բայց այդ փոփոխությունն էլ կհանգեցներ նորից հարության: Թեև մարդը կարող էր, անշուշտ, մեռած լինել, նա անպայման հարություն կառներ՝ փառքից փառք անցնելով: Սակայն փոխարենը, ինչպես պատմվում է Ծննդոց գրքում, Ադամի և Եվայի զավակները մահից մահ են շարժվում՝ մինչև ջրհեղեղը:

Անկմանը հաջորդող իրադարձություններից տեղեկանում ենք, որ Ադամն ու Եվան և նրանց միջոցով նաև ամբողջ մարդկությունը դատապարտվում է հարապտույտ տառապանքների: Մարդը պետք է մշակի այն հողը, որից նա ստեղծվել է, մինչև վերադառնա այնտեղ (Ծնն. 3:17), իսկ Եվան պիտի ծննդաբերի ցավով (Ծնն. 3:16): Եվ նա կծնի սերունդ, որը կբարձրանա և կջախջախի օձի գլուխը (Ծնն. 3:15):

Աստծո փրկագնման ծրագրում օգտագործվում են արարչագործության պատկերները: Ադամը, ապավինելով Աստծո խոստումներին, իր կնոջը տալիս է նոր անուն՝ «Եվա», որը նշանակում է «բոլոր ողջերի մայրը» (Ծնն. 3:20): Նա նոր սերմացու բույս է, որի Որդին կյանք կբերի աշխարհին և կկրի իր հոր՝ Ադամի՝ փշերից հյուսված թագը (Ծնն. 3:18): Որպես նոր Ադամ՝ Նա նույնպես կբացի Իր կողքը (Հովհ. 19:34) և կկախվի ծառից, ինչպես հասունացած պտուղը: Նա է, Ով կգա՝ Իր կյանքը տալու աշխարհի կյանքի համար (Հովհ. 6:51)՝ ոչ միայն որպես ուսուցիչ կամ բուժող, այլև որպես Աստծո Խոսք, որը կերակուր է՝ դրախտի հաց (Հովհ. 6:32—33):

Հիսուս Քրիստոսի խաչը ևս աղերսակցվում է Այգու երկու եզակի ծառերի պատմությանը: Խաչը նոր Կենաց ծառն է, որով Աստված կերակրում է Իր ժողովրդին և Իր հավիտենական կյանքն ապրում նրանց հետ: Հիսուսը մեզ ավելին է առաջարկում, քան պարզապես մարմնական սնունդը, քանի որ մենք նույնպես միայն հացով չենք ապրում: Նա մեզ առաջարկում է Ինքն Իրեն, Որ Հոր Խոսքն է (Հովհ. 1:14): Հիսուս Քրիստոսի խաչն ամբողջացնում է նաև բարու և չարի գիտության ծառը: Քրիստոսի՝ դեպի խաչելություն գնալուց անմիջապես առաջ էր, երբ պոնտացի կուսակալ Պիղատոսը, որին վստահված էր բարու և չարի գիտությունը, վստահված էր դատել և դատավճիռներ կայացնել, Հիսուսին հարցնում է. «Ի՞նչ է ճշմարտությունը» (Հովհ. 18:38): Օրենքների և իրավունքի գիտակ անձը, որը կոչված է հանրային վճիռներ կայացնելու և պաշտպանելու արդարությունն ու ճշմարտությունը, գտնվում է ամենևին այլ բևեռում՝ անկարող ճշմարիտ և ուղղամիտ դատավճիռ կայացնելու. նա հեռու է ճշմարտությամբ և աստվածահաճո իմաստնությամբ գործելուց:

Օֆելյա ԳԱՍՊԱՐՅԱՆ
Նարեկ սրկ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Սարկավագուհի Հռիփսիմե Թայիրյան: Անտիպ նամակներ

➥ էջ 7

Մենք ալ կոտորածէ և մեռելութիւնէ հրաշքով ազատեցանք և տակաւին նոյն սարսափներով կ'ապրինք: Այս անյիշատակ արհաւիրքներէն շատ առաջ, երբ շնորհաւորած էիք մեր կաթողիկոսութիւնը, կամ ճիշտ մեր նոր խաչակրութիւն, անմիջապէս պատասխանեցինք, որուն օրինակը ի վկայութիւն կը ներփակենք, այնուհետև Ձեզմէ ոչ մէկ տող ընդունեցինք, սակայն մտքով յանցուցինք, որ մոռցած ըլլաք զմեզ:

Բաւական է այսքանը անցեալին համար. ի սրտէ կուրախակցիմք Ձեր նոր պաաշտօնին կամ Կուսանաց Անապատի Մայրութեան կոչումին վրայ, և կը մաղթեմք, որ արժանապէս և արդիւնաւորապէս կատարէք այդ ծանր պատասխանատու պաշտօնը:

Պարտքեր ունեիք Դուք առ Էջմիածին և Երուսաղէմ և լիովին կատարեցիք, արդէօք պարտք չէք զգա՞ր Ձեր մէջ դէպի Կիլիկիան, որ մեր վերջին թագաւորներու թագն ու փառքն եղաւ և այժմ մեր Ազգի ողջակիզման նուիրական սեղանը, որուն չորս կողմը բիւրաւոր երկսէռ որբեր մայրական գուգուրանքի պէտք ունին, հազարաւոր այրիներ անձիւրեաց կ'սպասին քրոջական խանդաղատանքի. եկեղեցիներ, վանքեր, դպրոցներ քարուքանդ օգնող ձեռքերու կ'սպասին, ասոնց կարգին Հայրապետական Մայր Տաճարն ալ անշքացած վերանորոգութեան կարօտութիւն ունի: Գրեցինք և հրատարակել տուինք այս. մեծ և անյետաձգելի պէտքը, բայց գործնական ոչ մէկ պատասխանի չարժանացանք: Մեր միակ փափագն է, որ առաջին օրինակը դուք տաք և անուննիդ և Ձեր ազգատոհմի յիշատակը անմահացնէք Ռուբինեանց պանծալի անուններու շարքին մէջ:

Ի խնդրուածս վասն երջանկութեան տառապակիր Ազգին մերոյ Սիրելւոյ

Աղօթարար
Սահակ Բ. կաթողիկոս Կիլիկիո

Մատենադարան

Տ. ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԱՄԱԿԸ ԹԻՖԼԻՍԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԿՈՒՍԱՆԱՑ ԱՆԱՊԱՏԻ ՄԱՅՐԱՊԵՏ ՀՌԻՓՍԻՄԵ ԹԱՅԻՐՅԱՆՑԻՆ

7 հոկտեմբեր 1896 թ.

ԲԱՐԵՇՆՈՐՀ ԱՒԱԳ ՍԱՐԿԱՒԱԳՈՒՀԻ ԿՈՅՍ ՀՌԻՓՍԻՄԷ ԹԱՅԻՐԵԱՆՑ

Հոգևոր Քոյրդ իմ ի Քրիստոս

Երկար ժամանակ եղաւ, որ ոչ Դուք և ոչ ես չեմք գրեր. չը գիտեմ թէ Ձեր կողմից ինչ պատճառ ունիք. քանի որ ես Ձեր բոլոր նամակները անպատասխանի թողած չեմ և վերջին գրողը ես եղած եմ: Եթէ տկար չէք, միւս պատճառները այնքան նշանակութիւն չունին: Գուցե վերջին գրութիւնս ընդունած չէք և այնքան զարմանալի բան չէ, քանի որ աշխարհ շատ խռովեալ վիճակ մը ունի: Ինչ որ լինի, Ձեր վիճակը համեմատաբար երջանիկ կը համարուի, իսկ մերի՞նը... բաւ կը պակսի որակելու: Վերջին նամակս գրելու ատեն տակաւին բռնի մը կը նմանէր մեր կացութիւնը, բայց այժմ աւելի քան դառնագոյն է. չունինք ոչ մի կերպով ապահովութիւն, աղքատութիւնը մեծ վտանգ կը սպառնայ ազգի դարաւոր իրաւանց. շատ տեղերում Երուսաղեմապատկան կալուածները քանդուեցան և այրեցան, իսկ անվնաս մնացած տեղերում ալ հասարակութեան չքաւորութեան երեսից դատարկուած են. ուխտաւոր չունինք և ապագայում ևս ունենալու յոյս չունինք: Ով գիտէ, որքան երկար պիտի տևէ այս աղետալի կացութիւնը, որուն դառն հետևանքը պիտի լինի Ս. տեղաց մէջ հայոց միաբանութիւնի և վանքերու անշքութիւնը ու քակորումն ու քանդումը:

Աստուծոյ ամենաբաւական այցելութիւնը հասնի առաջ տառապեալ ազգին, ապա մեզ:

Չեմ կարծեր, որ Դուք էլ շատ հանգիստ լինեք. Ձեր ուսումնական հարցն էլ ծանր է և շատ վտանգներ կը սպառնայ ազգային ինքնուրոյնութեան. ի՞նչ նպատակ ունէր և ինչ հետևանք ունեցաւ օտար դաւանութիւնից պաշտօնէին այցելութիւնը, ի Ս. Էջմիածին:

Խեղճ Հայրիկ, ինչ սև սիրտի — վիճակի ցաւ իւր կաթողիկուսութիւնը. ինչ ցաւեր և խոցեր արդեոք ճնշած են այդ անպարտելի սիրտը, որ երկար ժամանակէ ի վեր տող մի գիր անգամ չը գրեց այս կողմը և երեք ամիս եղաւ որ «Արձագանք» չենք ստանար. երևի Յունվարեն հաշուվելով երկու օրինակի համար բաժանորդագրութեան պայմանաժամը վերջացած սեպել են. իրաւունք ունին եթէ այս պատճառաւ դադարեցուցած են. նոքա էլ հացի խնդրով պետք է պարտատրին, քանի որ ժամանակը ամենի համար դառնացած է, ուստի կը խնդրիմ, որ բաժանորդագրութիւնը վերանորոգեք իմ հաշուով և ապսպրէք խմբագրութեան, որ միայն մի օրինակ իմ անուամբ և Վիեննայի ճանապարհու ղրկին այն թիւէն սկսեալ, յորմէ դադարեցուցած են, յուսալով, որ այս նեղութիւնն էլ սիրով յանձն կառնուք և կը կատարէք: Շնորհակալութիւնս եղբայրական սիրով ողջունելով զհոգևոր Քոյրդ իմ

Մնամ աղօթարար
Սահակ եպսկ.
Մատենադարան

Հրատարակության պատրաստեց
Սիլվա ՍՈՒՔԻԱՍՅԱՆԸ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 16.08.2024 թ.
Տպաքանակը՝ 1265